

## Համաշխարհային փոստային կոնվենցիա

Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ Միություն) անդամ երկրների կառավարությունների ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները՝ հիմնվելով 1964 թվականի հուլիսի 10-ին Վիեննայում ստորագրված Համաշխարհային փոստային միության Կանոնադրության 21.3 հոդվածի վրա, ընդհանուր համաձայնությամբ եւ հաշվի առնելով Կանոնադրության 24.3 եւ 5-րդ հոդվածները, սույն Համաշխարհային փոստային կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանեցին միջազգային փոստային ծառայության նկատմամբ կիրառելի կանոնները:

### Բաժին I

#### Միջազգային փոստային ծառայության նկատմամբ կիրառելի ընդհանուր կանոնները

#### Հոդված 1

##### Սահմանումները

1 Սույն Կոնվենցիայի նպատակներով հետեւյալ եզրույթներն ունեն ստորեւ սահմանված իմաստները.

1.1 Գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանի՝ Կոնվենցիայում եւ Կանոնակարգերում սահմանված եւ դրանց պայմանների համաձայն փոխադրվող առաքանի,

1.2 Ծանրոց հանդիսացող փոստային առաքանի՝ Կոնվենցիայում եւ Կանոնակարգերում սահմանված եւ դրանց պայմանների համաձայն փոխադրվող առաքանի,

1.3 Արագընթաց փոստային ծառայության (EMS) առաքանի՝ Կոնվենցիայում եւ Կանոնակարգերում եւ EMS հարակից փաստաթղթերում սահմանված եւ դրանց պայմանների համաձայն փոխադրվող առաքանի,

1.4 Փաստաթղթեր՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանի, ծանրոց հանդիսացող փոստային առաքանի կամ EMS առաքանի՝ կազմված ձեռագիր, նկարված, տպագրված կամ թվային տեղեկություններից՝ բացառությամբ առետրի առարկա հանդիսացող ապրանքների, որոնց ֆիզիկական բնութագրերը մտնում են Կանոնակարգերով սահմանված շրջանակի մեջ,

1.5 Ապրանքներ՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանի, ծանրոց հանդիսացող փոստային առաքանի կամ EMS առաքանի՝ կազմված գումար

չհանդիսացող ցանկացած նյութական եւ շարժական առարկայից, այդ թվում՝ առետրի առարկա հանդիսացող ապրանքներից, որը չի մտնում վերոնշյալ 1.4 կետում տրված՝ «փաստաթղթերի» սահմանման մեջ, եւ որի ֆիզիկական բնութագրերը մտնում են Կանոնակարգերով սահմանված շրջանակի մեջ,

1.6 Փակ փոստային առաքում՝ մակնշված բեռնարկ(եր)՝ կապարակնքված կամ առանց կնիքի, որոնք պարունակում են փոստային առաքանիներ,

1.7 Սխալ առաքված փոստային առաքումներ՝ բեռնարկ(եր), որոնք ստացվել են ոչ այն փոխանակման գրասենյակում, որը նշված է (բեռնարկի) մակնշման վրա,

1.8 Անձնական տվյալներ՝ փոստային ծառայության հաճախորդի ինքնությունը պարզելու համար անհրաժեշտ տեղեկություններ,

1.9 Սխալ հասցեագրված առաքանիներ՝ փոխանակման գրասենյակում ստացված առաքանիներ, որոնք պետք է առաքված լինեին մեկ այլ անդամ երկրում գտնվող փոխանակման գրասենյակ,

1.10 Տարանցման ծախսեր՝ տարանցման երկրի փոխադրողի (նշանակված օպերատոր, այլ ծառայություն կամ երկուսը միասին) կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող վարձատրություն գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ցամաքային, ծովային եւ (կամ) օդային տարանցիկ փոխադրումների դիմաց,

1.11 Վերջնական վճարներ՝ վարձատրություն, որն ուղարկող երկրի նշանակված օպերատորը պետք է կատարի վերջնակետ երկրի նշանակված օպերատորին՝ վերջնակետ երկրում ստացված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների մասով կրած ծախսերի դիմաց,

1.12 Նշանակված օպերատոր՝ իր տարածքում փոստային ծառայությունների իրականացման եւ դրա հետ կապված՝ Միության ակտերից բխող համապատասխան պարտավորությունների կատարման նպատակով անդամ երկրի կողմից պաշտոնապես նշանակված ցանկացած պետական կամ ոչ պետական կազմակերպություն,

1.13 Փոքր փաթեթ՝ Կոնվենցիայի եւ Կանոնակարգերի պայմանների համաձայն փոխադրվող առաքանի,

1.14 Ներքին ցամաքային դրույքաչափ՝ վարձատրություն, որն ուղարկող երկրի նշանակված օպերատորը պետք է կատարի վերջնակետ երկրի նշանակված օպերատորին՝ վերջնակետ երկրում ստացված ծանրոցների մասով կրած ծախսերի դիմաց,

1.15 Տարանցման ցամաքային դրույքաչափ՝ տարանցիկ երկրի փոխադրողի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող վարձատրություն (նշանակված օպերատոր, այլ ծառայություն կամ երկուսը միասին)՝ կապված իր տարածքում ծանրոցների ցամաքային եւ (կամ) օդային տարանցիկ փոխադրումների

հետ,

1.16 Ծովային դրույքաչափ՝ ծանրոցների ծովային փոխադրմանը մասնակցող փոխադրողի (նշանակված օպերատոր, այլ ծառայություն կամ երկուսը միասին) կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող վարձատրություն,

1.17 Բողոք՝ Կոնվենցիայի եւ Կանոնակարգերով սահմանված կարգով փոստային ծառայություններից օգտվելու կապակցությամբ ներկայացված գանգատ կամ հարցում,

1.18 Համաշխարհային փոստային ծառայություններ՝ որակյալ հիմնական փոստային ծառայությունների՝ մշտական հիմունքներով տրամադրումն անդամ երկրի տարածքի բոլոր կետերում բոլոր հաճախորդների համար՝ մատչելի գներով,

1.19 Բաց (à découvert) տարանցում՝ միջանկյալ երկրի միջոցով այն առաքանիների բաց տարանցում, որոնց քանակը կամ քաշը չեն արդարացնում վերջնակետ երկրի համար փակ փոստային առաքումների կազմակերպումը:

## **Հոդված 2**

### **Կոնվենցիային միանալուց բխող պարտավորությունների կատարման համար պատասխանատու սուբյեկտի կամ սուբյեկտների նշանակումը**

1 Անդամ երկրները Համագումարի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, Միջազգային բյուրոյին հայտնում են այն պետական մարմնի անունը եւ հասցեն, որը պատասխանատու է փոստային հարցերով վերահսկողություն իրականացնելու համար: Համագումարի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, անդամ երկրները Միջազգային բյուրոյին հայտնում են նաեւ այն օպերատորի կամ օպերատորների անունը եւ հասցեն, որը (որոնք) պաշտոնապես նշանակվել է (են) իրենց տարածքում փոստային ծառայությունների մատուցման եւ Միության ակտերից բխող պարտավորությունների կատարման նպատակով: Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում անդամ երկրները Միջազգային բյուրոյին հնարավորինս շուտ հայտնում են պետական մարմինների փոփոխությունների մասին: Պաշտոնապես նշանակված օպերատորներին վերաբերող ցանկացած փոփոխության մասին հնարավորինս շուտ եւ ցանկալի է՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն երեք ամիս առաջ տեղեկացվում է Միջազգային բյուրոյին:

2 Եթե անդամ երկիրը պաշտոնապես նոր օպերատոր է նշանակում, ապա նա պետք է նշի փոստային ծառայությունների ծավալը, որը Միության ակտերի համաձայն տրամադրելու է այդ օպերատորը, ինչպես նաեւ իր երկրի այն աշխարհագրական տարածքը, որը ծածկում են օպերատորի կողմից մատուցվող ծառայությունները:

### **Հոդված 3**

#### **Համաշխարհային փոստային ծառայություններ**

1 Միության միասնական փոստային տարածքի գաղափարն ամրապնդելու նպատակով անդամ երկրները պետք է ապահովեն, որ բոլոր օգտվողները/հաճախորդներն ունենան համաշխարհային փոստային ծառայություններից օգտվելու իրավունք, այդ թվում՝ որակյալ հիմնական փոստային ծառայությունների՝ մշտական հիմունքներով տրամադրումն իրենց տարածքի բոլոր կետերում՝ մատչելի գներով:

2 Այս նկատառումով անդամ երկրները փոստային ոլորտին առնչվող իրենց ներպետական օրենսդրական մեխանիզմներով կամ այլ սովորության միջոցներով սահմանում են առաջարկվող փոստային ծառայությունների շրջանակը, որակին եւ գների մատչելիությանը ներկայացվող պահանջները՝ հաշվի առնելով ինչպես բնակչության կարիքները, այնպես էլ իրենց ներպետական պայմանները:

3 Անդամ երկրները պետք է ապահովեն, որ համաշխարհային փոստային ծառայություններ տրամադրելու համար պատասխանատու օպերատորների կողմից պահպանվեն փոստային ծառայությունների առաջարկները եւ որակի չափանիշները:

4 Անդամ երկրները պետք է համաշխարհային փոստային ծառայությունների տրամադրման համար ապահովեն հուսալի հիմք՝ դրանով իսկ երաշխավորելով դրա կայուն զարգացումը:

### **Հոդված 4**

#### **Տարանցման ազատությունը**

1 Տարանցման ազատության սկզբունքը սահմանված է Կանոնադրության 1-ին հոդվածում: Այն ենթադրում է յուրաքանչյուր անդամ երկրի պարտավորությունը՝ ապահովել, որ իր նշանակված օպերատորները մեկ այլ նշանակված օպերատորի կողմից իրենց փոխանցված փակ փոստային առաքումներն ու բաց տարանցման միջոցով ուղարկվող գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներն ուղարկեն սեփական առաքանիներն ուղարկելու համար օգտագործվող ամենաարագ ճանապարհով եւ ամենահուսալի միջոցներով: Սույն սկզբունքը կիրառվում է նաեւ սխալ հասցեագրված առաքանիների եւ սխալ առաքված փոստային առաքումների դեպքում:

2 Այն անդամ երկրները, որոնք չեն մասնակցում վարակիչ կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող փոստային առաքանիների փոխանակմանը, պետք է ունենան այդ առաքանիների՝ իրենց տարածքով բաց տարանցումը չթույլատրելու իրավունք:



Նույնը վերաբերում է նաեւ տպագիր հրատարակություններին, պարբերականներին, ամսագրերին, փոքր փաթեթներին եւ M պարկերին, որոնց պարունակությունը չի համապատասխանում տարանցիկ երկրում դրանց հրապարակմանը կամ շրջանառությանը ներկայացվող օրենսդրական պահանջներին:

3 Ծանրոցների տարանցման ազատությունը երաշխավորվում է Միության ամբողջ տարածքում:

4 Եթե որեւէ անդամ երկիր չի պահպանում տարանցման ազատությանը վերաբերող դրույթները, մյուս անդամ երկրներն իրավունք ունեն դադարեցնելու այդ անդամ երկրին փոստային ծառայությունների տրամադրումը:

### **Հոդված 5**

**Փոստային առաքանիների նկատմամբ սեփականության իրավունքը: Առաքանու հետկանչումը փոստից: Հասցեատիրոջ հասցեի եւ (կամ) հասցեատիրոջ անվան փոփոխությունը կամ ուղղումը (իրավաբանական անձի անունը եւ (կամ) առկայության դեպքում՝ ազգանունը, ծննդյան անունը կամ հայրանունը): Վերահասցեավորումը: Առաքման ոչ ենթակա առաքանիների վերադարձը ուղարկողին:**

1 Փոստային առաքանին մնում է ուղարկողի սեփականությունը, քանի դեռ այն չի հանձնվել օրինական սեփականատիրոջը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաքանին բռնագրավվել է ծագման կամ վերջնակետ երկրի ներպետական օրենսդրության համաձայն, ինչպես նաեւ 19.2.1.1 կամ 19.3 հոդվածի կիրառման դեպքում՝ համաձայն տարանցիկ երկրի ներպետական օրենսդրության:

2 Փոստային առաքանին ուղարկողը կարող է այն հետ կանչել փոստից, փոփոխել կամ ուղղել իր հասցեն եւ (կամ) հասցեատիրոջ անունը (իրավաբանական անձի անունը եւ (կամ) առկայության դեպքում՝ ազգանունը, ծննդյան անունը կամ հայրանունը): Վճարները եւ մյուս պայմանները սահմանվում են Կանոնակարգերով:

3 Անդամ երկրներն ապահովում են, որ իրենց նշանակված օպերատորները վերահասցեավորեն առաքանիները, եթե հասցեատերը փոխել է իր հասցեն, ինչպես նաեւ ուղարկողին վերադարձնեն առաքման ոչ ենթակա առաքանիները: Վճարները եւ մյուս պայմանները սահմանվում են Կանոնակարգերով:

### **Հոդված 6**

#### **Փոստային նամականիշները**

1 «Փոստային նամականիշեր» եզրույթը պաշտպանված է սույն Կոնվենցիայով եւ օգտագործվում է բացառապես այն նամականիշերի դեպքում, որոնք համապատասխանում են սույն հոդվածի եւ Կանոնակարգերի պայմաններին:

## 2 Փոստային նամականիշերը՝

2.1 թողարկվում եւ շրջանառության մեջ են մտնում բացառապես անդամ երկրի կամ տարածքի համապատասխան մարմնի թույլտվությամբ՝ Միության ակտերին համապատասխան,

2.2 ինքնիշխանության դրսեւորում են եւ համարվում են փոստային առաքման կանխավճարի վճարման ապացույց՝ դրանց փաստացի արժեքին համապատասխան գումարի չափով, երբ դրանք փակցվում են փոստային առաքանուն՝ Միության ակտերին համապատասխան,

2.3 պետք է կանխավճարային փոստային առաքման կամ ֆիլատելիստական նպատակներով լինեն շրջանառության մեջ թողարկող անդամ երկրում կամ տարածքում՝ համաձայն այդ երկրի ներպետական օրենսդրության,

2.4 պետք է հասանելի լինեն թողարկող անդամ երկրի կամ տարածքի բոլոր քաղաքացիների համար:

## 3. Փոստային նամականիշերի վրա նշվում են՝

3.1 թողարկող անդամ երկրի կամ տարածքի անունը՝ լատինական այբուբենի տառերով, կամ Միության միջազգային բյուրոյին թողարկող անդամ երկրի կամ տարածքի կողմից խնդրելու դեպքում՝ թողարկող անդամ երկիրը կամ տարածքը պաշտոնապես ներկայացնող հապավումը կամ անվան սկզբնատառերը՝ համաձայն Կանոնակարգերով սահմանված պայմանների<sup>1</sup>,

### 3.2 անվանական արժեքը՝ արտահայտված՝

3.2.1 որպես կանոն, թողարկող երկրի կամ տարածքի պաշտոնական արժույթով կամ տառի կամ խորհրդանիշի ձեւով,

### 3.2.2 այլ նույնականացնող հատկանիշների միջոցով:

4 Փոստային նամականիշերի վրա պատկերված պետական խորհրդանիշները, պաշտոնական ծառայողական մակագրությունները եւ միջկառավարական կազմակերպությունների տարբերանշանները պաշտպանված են «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզի կոնվենցիայի դրույթների շրջանակներում:

## 5 Փոստային նամականիշերի թեմաները եւ դիզայնները պետք է՝

5.1 համապատասխանեն Կանոնադրության նախաբանի ոգուն եւ Միության մարմինների կողմից կայացրած որոշումներին,

5.2 սերտորեն կապված լինեն անդամ երկրի կամ տարածքի մշակութային ինքնությանը կամ նպաստեն մշակույթի տարածմանը կամ խաղաղության պահպանմանը,

5.3 ի հիշատակ տվյալ անդամ երկրի կամ տարածքի պատմության հետ

<sup>1</sup> Բացառություն է սահմանվում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության համար՝ որպես փոստային նամականիշը հայտնագործող երկիր:

առնչություն չունեցող նշանավոր անձանց կամ իրադարձությունների թողարկվող նամականիշերի դեպքում սերտ առնչություն ունենան տվյալ երկրի կամ տարածքի հետ,

5.4 չպետք է ունենան քաղաքական բնույթ կամ պարունակեն որեւէ անձի կամ երկրի նկատմամբ վիրավորական բնույթի թեմաներ,

5.5 կարելի է նշանակություն ունենան անդամ երկրի կամ տարածքի համար:

6 Փոստային առաքումների կանխավճարի դրոշմները, ֆրանկոմեքենայի դրոշմները եւ տպագրահաստոցի կամ տպագրության կամ դրոշմման մեկ այլ գործընթացով պատրաստված դրոշմները, համաձայն Միության ակտերի, կարող են օգտագործվել միայն անդամ երկրի կամ տարածքի թույլտվությամբ:

7 Նախքան նոր տեխնոլոգիաների կամ նոր նյութերի կիրառմամբ պատրաստված փոստային նամականիշերի թողարկումը՝ անդամ երկրները Միջազգային բյուրոյին տրամադրում են անհրաժեշտ տեղեկություններ՝ նամակների մշակման մեքենաների հետ դրանց համատեղելիության վերաբերյալ: Միջազգային բյուրոն համապատասխանաբար տեղեկացնում է մյուս անդամ երկրներին եւ նրանց նշանակված օպերատորներին:

## **Հոդված 7**

### **Կայուն զարգացումը**

Անդամ երկրները եւ (կամ) նրանց նշանակված օպերատորները պետք է ընդունեն եւ իրականացնեն կայուն զարգացման արդյունավետ ռազմավարություն փոստային գործունեության բոլոր մակարդակներում՝ կենտրոնանալով բնապահպանական, սոցիալական եւ տնտեսական ոլորտների գործունեության վրա, ինչպես նաեւ նպաստեն կայուն զարգացման հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

## **Հոդված 8**

### **Փոստային անվտանգությունը**

1 Անդամ երկրները եւ նրանց նշանակված օպերատորները պետք է համապատասխանեն Համաշխարհային փոստային միության անվտանգության չափանիշներով սահմանված անվտանգության պահանջներին, ինչպես նաեւ ընդունեն եւ փոստային գործունեության բոլոր մակարդակներում իրականացնեն անվտանգության արդյունավետ ռազմավարություն՝ նշանակված օպերատորների կողմից տրամադրվող փոստային ծառայությունների նկատմամբ վստահությունը հասարակության լայն զանգվածների շրջանում պահպանելու եւ ամրապնդելու

նպատակով՝ ելնելով բոլոր ներգրավված պաշտոնատար անձանց շահերից: Սույն ռազմավարությունը ներառում է Կանոնակարգերով սահմանված նպատակները, ինչպես նաև Վարչական խորհրդի եւ Փոստային գործառնությունների խորհրդի կողմից ընդունված դրույթներն իրականացնելիս նույնականացված փոստային առաքանիների մասով էլեկտրոնային առաջնակարգ տվյալների (այդ թվում՝ փոստային առաքանիների տեսակը եւ չափորոշիչները) ապահովման պահանջներին համապատասխանելու սկզբունքը՝ համաձայն Միության՝ հաղորդագրությունների տարածման տեխնիկական չափանիշներին: Ռազմավարությունը ներառում է նաև անդամ երկրների եւ նրանց նշանակված օպերատորների միջեւ փոստային առաքումների անվտանգ եւ ապահով փոխադրման եւ տարանցման մասին տեղեկությունների փոխանակումը:

2 Միջազգային փոստային փոխադրումների շղթայում կիրառվող անվտանգության ցանկացած միջոց պետք է համարժեք լինի այն ռիսկերին կամ սպառնալիքներին, որոնց դա ուղղված է եւ պետք է իրականացվի՝ չխոչընդոտելով համաշխարհային փոստային հոսքերը կամ առետուրը՝ հաշվի առնելով փոստային ցանցի բոլոր առանձնահատկությունները: Անվտանգության այն միջոցները, որոնք կարող են գլոբալ ազդեցություն ունենալ փոստային գործառնությունների վրա, պետք է իրականացվեն միջազգայնորեն համակարգված եւ հավասարակշռված ձեով՝ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

## **Հոդված 9**

### **Իրավախախտումները**

#### **1 Փոստային առաքանիները**

1.1 Անդամ երկրները պարտավորվում են ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու, քրեորեն հետապնդելու կամ պատժելու այն անձանց, որոնք մեղավոր են ճանաչվել հետեւյալ գործողությունների կատարման համար.

1.1.1 փոստային առաքանիներում թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր, ինչպես նաև վտանգավոր ապրանքներ ներառելը, եթե դրանց ներառումն ուղղակիորեն թույլատրված չէ Կոնվենցիայով եւ Կանոնակարգերով,

1.1.2 փոստային առաքանիներում մանկապղծության կամ մանկական պոռնոգրաֆիայի հետ կապված առարկաներ ներառելը:

#### **2 Փոստային կանխավճարի վճարամիջոցները եւ փոստային վճարումը**

2.1 Անդամ երկրները պարտավորվում են ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ սույն Կոնվենցիայում սահմանված փոստային կանխավճարի վճարամիջոցներին վերաբերող ցանկացած իրավախախտում կանխելու, քրեորեն հետապնդելու եւ պատժելու համար, մասնավորապես՝

2.1.1 շրջանառության մեջ գտնվող կամ շրջանառությունից հանված փոստային նամականիշերը,

2.1.2 կանխավճարի դրոշմները,

2.1.3 ֆրանկոմեքենաների կամ տպագրահաստոցների դրոշմները,

2.1.4 միջազգային պատասխան կտրոնները:

2.2 Սույն Կոնվենցիայում փոստային կանխավճարի վճարամիջոցների մասով իրավախախտումները վերաբերում են ստորեւ նշված գործողություններից որեւէ մեկին, որը կատարվել է ցանկացած անձի կողմից՝ իր կամ երրորդ անձի համար անօրինական շահույթ ստանալու նպատակով: Պատժելի են հետեւյալ արարքները.

2.2.1 փոստային կանխավճարի վճարամիջոցները կեղծելու, նմանակելու կամ դրանց միջոցով խարդախություն կատարելու ցանկացած գործողություն կամ այդպիսի առաքանիների չթույլատրված արտադրման ապօրինի կամ անօրինական գործողություն,

2.2.2 կեղծված, նմանակված կամ խարդախությամբ օգտագործված փոստային կանխավճարի ցանկացած վճարամիջոցի արտադրություն, օգտագործում, թողարկում՝ շրջանառության, առետրայնացման, բաշխման, տարածման, փոխադրման, ցուցադրության կամ ցուցադրման (նաեւ կատալոգների տեսքով եւ գովազդային նպատակներով) համար,

2.2.3 փոստային ծառայությունների նպատակներով փոստային կանխավճարի այնպիսի վճարամիջոցի օգտագործման կամ շրջանառության ցանկացած գործողություն, որն արդեն օգտագործվել է,

2.2.4 այս իրավախախտումներից որեւէ մեկը կատարելու ցանկացած փորձ:

3 Փոխադարձությունը

3.1 Պատժամիջոցների տեսանկյունից 2-րդ կետով նախատեսված գործողությունների միջեւ տարբերություն չպետք է դրվի՝ անկախ նրանից, թե խնդրո առարկա են փոստային կանխավճարի ազգային, թե արտաքին վճարամիջոցները. սույն դրույթը ենթակա չէ փոխադարձության սկզբունքի մասով իրավական կամ պայմանագրային որեւէ պայմանի:

## **Հոդված 10**

### **Անձնական տվյալների մշակումը**

1 Օգտվողների անձնական տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար դրանք ձեռք են բերվել՝ համաձայն գործող ներպետական օրենսդրության:

2 Օգտվողների անձնական տվյալները կարող են բացահայտվել միայն այն երրորդ կողմերին, որոնց գործող ներպետական օրենսդրության համաձայն

թույլատրվում է հասանելիություն ունենալ այդ տվյալներին:

3 Անդամ պետությունները եւ նրանց նշանակված օպերատորները պետք ապահովեն օգտվողների անձնական տվյալների գաղտնիությունը եւ անվտանգությունը՝ իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան:

4 Նշանակված օպերատորները պետք է իրենց հաճախորդներին տեղեկացնեն վերջիններիս անձնական տվյալների օգտագործման եւ դրանց ձեռքբերման նպատակի մասին:

5 Չխախտելով վերոգրյալը՝ նշանակված օպերատորները կարող են էլեկտրոնային եղանակով անձնական տվյալները փոխանցել վերջնակետ երկրի կամ տարանցիկ երկրների նշանակված օպերատորներին, որոնց այդ տվյալներն անհրաժեշտ են ծառայությունն իրականացնելու համար:

### **Հոդված 11**

#### **Փակ փոստային առաքումների փոխանակումը զինվորական ստորաբաժանումների հետ**

1 Այլ երկրների ցամաքային, ծովային կամ օդային ծառայությունների միջոցով կարող են փոխանակվել գրավոր նամակագրություն հանդիսացող փակ փոստային առաքանիներ՝

1.1 ցանկացած անդամ երկրի փոստային գրասենյակի եւ Միավորված ազգերի կազմակերպության տրամադրության տակ գտնվող զինվորական ստորաբաժանումների հրամանատարական կազմի ծառայողների միջեւ,

1.2 այդ զինվորական ստորաբաժանումների հրամանատարական կազմի ծառայողների միջեւ,

1.3 ցանկացած անդամ երկրի փոստային գրասենյակի եւ միեւնույն երկրի՝ արտասահմանում տեղակայված նավատորմային, օդային կամ բանակային ստորաբաժանումների, ռազմական նավերի կամ ռազմական ինքնաթիռների հրամանատարական կազմի ծառայողների միջեւ,

1.4 նույն երկրի նավատորմային, օդային կամ բանակային ստորաբաժանումների, ռազմական նավերի կամ ռազմական ինքնաթիռների հրամանատարական կազմի ծառայողների միջեւ:

2 Առաջին կետում նշված փոստային առաքումներում ներառված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները սահմանափակվում են միայն այն զինվորական ստորաբաժանումների անդամների կամ ծառայողների կամ նավերի կամ օդանավերի անձնակազմերի կողմից հասցեագրված կամ նրանց ուղարկված առաքանիներով, որտեղ կամ որտեղից ուղարկվում են փոստային առաքումները: Նրանց նկատմամբ կիրառվող առաքման դրույքաչափերն ու պայմանները, համաձայն

իրենց կանոնակարգերի, սահմանվում են այն անդամ երկրի նշանակված օպերատորի կողմից, որը հասանելի է դարձրել զորամասը, կամ որին պատկանում են նավերը կամ օդանավերը:

3 Հատուկ համաձայնության բացակայության դեպքում այն անդամ երկրի նշանակված օպերատորը, որը հասանելի է դարձրել զինվորական ստորաբաժանումը, կամ որին պատկանում են ռազմանավերը կամ ռազմական օդանավերը, պարտավոր է վճարել համապատասխան նշանակված օպերատորներին փոստային առաքումների տարանցման վճարների, վերջնական վճարների եւ օդային փոխադրման վճարների համար:

## **Հոդված 12**

### **Արտերկրից ուղարկվող գրավոր նամակագրական առաքանիները**

1 Նշանակված օպերատորները պարտավոր չեն ուղարկել կամ հասցեատիրոջն առաքել գրավոր նամակագրություն հանդիսացող այն առաքանիները, որոնք իրենց անդամ երկրի տարածքում բնակվող ուղարկող անձինք ուղարկում են կամ հրահանգ են տալիս ուղարկելու այլ երկրից՝ այնտեղ գործող առավել բարենպաստ դրույքաչափերից օգտվելու նպատակով:

2 Առաջին կետում սահմանված դրույթներն առանց տարբերակման կիրառվում են ինչպես ուղարկողի բնակչության երկրում պատրաստված եւ սահմանով փոխադրված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների, այնպես էլ այլ երկրում պատրաստված՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների նկատմամբ:

3 Վերջնակետ երկրի նշանակված օպերատորը կարող է փոստային առաքումն իրականացնող երկրի նշանակված օպերատորից պահանջել ներքին դրույքաչափերի վճարում: Եթե փոստային առաքումն իրականացնող երկրի նշանակված օպերատորը չի համաձայնում վճարել այս դրույքաչափերը վերջնակետ երկրի նշանակված օպերատորի կողմից սահմանված ժամկետում, ապա վերջինս կա՛մ կարող է առաքանիները վերադարձնել փոստային առաքումն իրականացնող երկրի նշանակված օպերատորին՝ ունենալով վերահասցեավորման ծախսերի փոխհատուցում պահանջելու իրավունք, կա՛մ կարգավորել դրա հետ կապված հարցերն իր երկրի ներպետական օրենսդրության համաձայն:

4 Նշանակված օպերատորները պարտավոր չեն հասցեատերերին փոխանցել կամ առաքել գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներ, որոնք ուղարկողներն ուղարկում են կամ հրահանգում են դրանք մեծ քանակություններով ուղարկել իրենց բնակչության երկիրը չհանդիսացող երկրից, եթե ստացման ենթակա վերջնական վճարներն ավելի ցածր են, քան այն գումարի չափը, որը կստացվեր, եթե

առաքանին ուղարկված լինելու ուղարկողների բնակության երկրից: Վերջնակետ երկրի նշանակված օպերատորը կարող է փոստային առաքումն իրականացնող երկրի նշանակված օպերատորից պահանջել կրած ծախսերին համարժեք վճարում, որը չի գերազանցում հետեւյալ երկու գումարներից ամենաբարձրը՝ կա՛մ համարժեք առաքանիների համար նախատեսված ներպետական սակագնի 80%-ը, կա՛մ անհրաժեշտության դեպքում 29-րդ, 30.5-30.11, 30.12 եւ 30.13 կամ 31.17 հոդվածների համաձայն կիրառվող դրույքաչափերը: Եթե փոստային առաքումն իրականացնող երկրի նշանակված օպերատորը չի համաձայնում վճարել պահանջվող գումարը վերջնակետ երկրի նշանակված օպերատորի կողմից սահմանված ժամկետում, ապա վերջնակետ երկրի նշանակված օպերատորը կարող է կա՛մ առաքանիները վերադարձնել փոստային առաքումն իրականացնող երկրի նշանակված օպերատորին՝ ունենալով վերահասցեավորման ծախսերի փոխհատուցում պահանջելու իրավունք, կա՛մ կարգավորել դրա հետ կապված հարցերն իր երկրի ներպետական օրենսդրության համաձայն:

### **Հոդված 13**

#### **Միության ձեւերի օգտագործումը**

1 Եթե Միության ակտերով այլ բան նախատեսված չէ, ապա միայն նշանակված օպերատորներն իրավունք ունեն Միության ակտերի համաձայն փոստային ծառայությունների իրականացման եւ փոստային առաքանիների փոխանակման համար օգտագործելու Միության ձեւերը եւ փաստաթղթերը:

2 Նշանակված օպերատորները կարող են օգտագործել Միության ձեւերը եւ փաստաթղթերը նշանակված օպերատորների կողմից իրենց համապատասխան ազգային տարածքից դուրս հիմնադրված Փոխանակման արտատարածքային գրասենյակների (ՓԱԳ-եր), ինչպես նաեւ միջազգային փոստի մշակման կենտրոնների (ՄՓՄԿ-ներ) գործունեության համար, ինչպես սահմանվել է նաեւ 6-րդ կետով վերոգրյալ փոստային ծառայությունների գործարկումը եւ փոստային առաքանիների փոխանակումը պարզեցնելու համար:

3 Երկրորդ կետում ներկայացված հնարավորությունն իրականացվում է համաձայն այն անդամ երկրի կամ տարածքի ներպետական օրենսդրության կամ քաղաքականության, որտեղ ստեղծվել է ՓԱԳ-ը կամ ՄՓՄԿ-ն: Այս առումով եւ չհակասելով 2-րդ հոդվածով նախատեսված նշանակման պարտավորություններին՝ նշանակված օպերատորները երաշխավորում են Կոնվենցիայի համաձայն իրենց պարտավորությունների շարունակական կատարումը եւ լիովին պատասխանատու են նշանակված այլ օպերատորների եւ Միջազգային բյուրոյի հետ իրենց



հարաբերությունների համար:

4 Երրորդ կետով սահմանված պահանջը հավասարապես կիրառվում է նաև վերջնակետ անդամ երկրի նկատմամբ՝ նման ՓԱԳ-երից եւ ՄՓՄԿ-ներից փոստային առաքանիներ ընդունելու դեպքում:

5 Անդամ երկրները տեղեկացնում են Միջազգային բյուրոյին ՓԱԳ-երից կամ ՄՓՄԿ-ներից փոխանցվող եւ (կամ) դրանցից ստացվող փոստային առաքանիների մասով իրենց ունեցած քաղաքականությունների վերաբերյալ: Այդ տեղեկությունները պետք է հասանելի լինեն Միության ինտերնետային կայքում:

6 Բացառապես սույն հոդվածի նպատակներով ՓԱԳ-երը սահմանվում են որպես գրասենյակներ կամ կենտրոններ, որոնք ստեղծվել են առետրային նպատակներով եւ շահագործվում են նշանակված օպերատորների կողմից կամ այլ անդամ երկրի կամ տարածքի նշանակված օպերատորների կողմից՝ իրենց համապատասխան ներպետական տարածքից դուրս գտնվող շուկաներում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով: ՄՓՄԿ-ները սահմանվում են որպես փոխանակված միջազգային փոստի մշակման կենտրոններ՝ կա՛մ փոխանակված միջազգային փոստի մշակման համար փոստային առաքումներ ուղարկելու կամ ստանալու, կա՛մ որպես այլ նշանակված օպերատորների միջեւ փոխանակվող միջազգային փոստի տարանցման կենտրոններ հանդես գալու նպատակով:

7 Սույն հոդվածով չպետք է ենթադրվի, որ ՓԱԳ-երը կամ ՄՓՄԿ-ները (այդ թվում՝ իրենց համապատասխան ներպետական տարածքից դուրս ստեղծման կամ գործունեության համար պատասխանատու նշանակված օպերատորները) Միության ակտերի համաձայն ունեն նույն կարգավիճակը, ինչ հյուրընկալող երկրի նշանակված օպերատորները, ոչ էլ մյուս անդամ երկրների նկատմամբ սահմանվի իրավական պարտավորություն՝ իրենց ստեղծման կամ գործունեության տարածքում ՓԱԳ-երին կամ ՄՓՄԿ-ներին որպես նշանակված օպերատորներ ճանաչելու մասով:

## **Բաժին II**

**Ծառայությունների որակին ներկայացվող նորմատիվները եւ թիրախային թվերը**

### **Հոդված 14**

**Ծառայությունների որակին ներկայացվող նորմատիվները եւ թիրախային թվերը**

1 Անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորները համապատասխան համառոտագրերում սահմանում, հրապարակում եւ թարմացնում են իրենց ներքին գրավոր նամակագրական առաքանիների եւ ծանրոց հանդիսացող

փոստային առաքանիների մասով առաքման նորմատիվներն ու թիրախային թվերը՝ Կանոնակարգերով սահմանված կարգով:

2 Սույն նորմատիվները եւ թիրախային թվերը, որոնք ավելանում են մաքսազերծման համար սովորաբար պահանջվող ժամանակի ընթացքում, չպետք է լինեն պակաս բարենպաստ, քան նրանք, որոնք իրենց ներպետական ծառայությունների շրջանակներում կիրառվում են համեմատելի առաքանիների նկատմամբ:

3 Ուղարկող անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորները նույնպես պետք է սահմանեն եւ հրապարակեն առաջնահերթությունների երկկողմ նորմատիվներ, ինչպես նաեւ ավիափոստային գրավոր նամակագրական առաքանիներին, ծանրոցներին եւ էկոնոմ դասի/վերգետնյա ճանապարհով ուղարկվող ծանրոցներին ներկայացվող նորմատիվներ:

4 Անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորները գնահատում են ծառայություններին ներկայացվող նորմատիվների կիրառումը:

### **Բաժին III**

#### **Վճարները, հավելավճարները եւ փոստային վճարներից ազատումը**

##### **Հոդված 15**

##### **Վճարները**

1 Կոնվենցիայով սահմանված տարբեր փոստային ծառայությունների վճարները սահմանվում են անդամ երկրների կամ նրանց նշանակված օպերատորների կողմից՝ համաձայն անդամ երկրների ներպետական օրենսդրությունների, ինչպես նաեւ Կոնվենցիայով եւ դրա Կանոնակարգերով սահմանված սկզբունքների: Որպես կանոն, դրանք պետք է կապված լինեն այս ծառայությունների տրամադրման ծախսերի հետ:

2 Ուղարկող անդամ երկիրը կամ նրա նշանակված օպերատորը, համաձայն ներպետական օրենսդրության, սահմանում է գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների փոխադրման փոստային վճարները: Փոստային վճարները ներառում են առաքանիների՝ նշված հասցե առաքման ծառայությունը՝ պայմանով, որ առաքման այս ծառայությունը գործում է նշված առաքանիների վերջնակետ երկրում:

3 Գանձվող վճարները, այդ թվում՝ ակտերում ուղենշային նպատակներով սահմանված վճարները պետք է առնվազն հավասար լինեն ներքին ծառայությունների ռեժիմով ուղարկվող՝ նույն հատկանիշներն ունեցող (կատեգորիա, քանակ, մշակման ժամանակ եւ այլն) առաքանիների դիմաց գանձվող վճարներին:

4 Անդամ երկրներին կամ նրանց նշանակված օպերատորներին՝ կախված ներպետական օրենսդրությունից, թույլատրվում է գերազանցել ակտերում նշված ուղենշային վճարները:

5 Երրորդ կետում սահմանված վճարների նվազագույն սահմանաչափի բարձրացման դեպքում անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորները կարող են անդամ երկրի տարածքից ուղարկված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոց հանդիսացող առաքանիների համար թույլատրել նվազեցված վճարներ՝ ելնելով իրենց ներպետական օրենսդրությունից: Նրանք կարող են, օրինակ, արտոնյալ դրույքաչափեր սահմանել փոստային ծառայություններից օգտվող հիմնական խաճախորդների համար:

6 Հաճախորդներից չեն կարող գանձվել ակտերով չնախատեսված փոստային վճարներ:

7 Բացառությամբ ակտերով այլ բան նախատեսված լինելու դեպքերի՝ նշանակված օպերատորները պահպանում են իրենց կողմից գանձված վճարները:

## **Հոդված 16**

### **Փոստային վճարներից ազատումը**

#### **1 Սկզբունքը**

1.1 Կոնվենցիայով ուղղակիորեն սահմանված են փոստային վճարներից, ինչպես օրինակ՝ փոստային կանխավճարի վճարումից ազատման դեպքերը: Այնուամենայնիվ, Կանոնակարգերով կարող են նախատեսվել անդամ երկրների, նշանակված օպերատորների եւ Տարածաշրջանային միությունների կողմից ուղարկվող եւ փոստային ծառայություններին առնչվող գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոց հանդիսացող առաքանիների փոստային կանխավճարից, տարանցման վճարներից, վերջնական վճարներից եւ ներքին դրույքաչափերից ազատումներ: Ավելին, Միության Միջազգային բյուրոյի կողմից Տարածաշրջանային միություններին, անդամ երկրներին եւ նշանակված օպերատորներին ուղարկված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներն ու ծանրոց հանդիսացող փոստային առաքանիներն ազատվում են փոստային բոլոր վճարներից: Այնուամենայնիվ, ծագման անդամ երկիրը կամ նրա նշանակված օպերատորը պետք է ունենա վերոնշյալ առաքանիների մասով լրացուցիչ օդային վճարներ գանձելու հնարավորություն:

#### **2 Ռազմագերիները եւ ներկալված քաղաքացիական անձինք**

2.1 Գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները, ծանրոց հանդիսացող փոստային առաքանիները եւ փոստային վճարումների ծառայություններին վերաբերող առաքանիները, որոնք հասցեագրված կամ

ուղարկված են ռազմագերիներին կամ ուղղակիորեն, կամ Կոնվենցիայի կանոնակարգերում եւ Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրում նշված գրասենյակների միջոցով, ազատվում են փոստային բոլոր վճարներից՝ բացառությամբ լրացուցիչ օդային վճարների: Հակամարտությանը ներգրավված անձինք, որոնք բերման են ենթարկվել եւ ներկայվել չեզոք երկրում, վերագրյալ դրույթների կիրառման իմաստով ուղղակիորեն դասվում են ռազմագերիների շարքին:

2.2 2.1 կետով սահմանված դրույթները կիրառվում են նաեւ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների, ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների եւ փոստային վճարումների ծառայություններին վերաբերող առաքանիների նկատմամբ, որոնք ծագում են այլ երկրներից եւ ուղղակիորեն կամ Կոնվենցիայի Կանոնակարգերում եւ Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրում նշված գրասենյակների միջոցով հասցեագրված են ներկայված քաղաքացիական անձանց կամ ուղարկվում են նրանց կողմից 1949 թվականի օգոստոսի 12-ի «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևի կոնվենցիայով սահմանված կարգով:

2.3 Կոնվենցիայի կանոնակարգերում եւ Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրում նշված գրասենյակները նույնպես ազատվում են գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների, ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների եւ փոստային վճարումների ծառայություններին վերաբերող առաքանիների մասով փոստային վճարներից, որոնք վերաբերում են 2.1 եւ 2.2 կետերում նշված անձանց, որոնք ուղարկվում կամ ստանում են այդ առաքանիներն ուղղակիորեն կամ միջնորդավորված ձեւով:

2.4 Ծանրոցներն ընդունվում են առանց փոստային վճարի, եթե չեն գերազանցում 5 կիլոգրամը: Քաշի սահմանաչափը պետք է բարձրացվի մինչեւ 10 կիլոգրամ այն ծանրոցների դեպքում, որոնց պարունակությունը չի կարող առանձնացվել, ինչպես նաեւ այն ծանրոցների դեպքում, որոնք հասցեագրված են որեւէ ճամբարի կամ այնտեղ գտնվող վստահված անձանց՝ բանտարկյալներին բաժանելու համար:

2.5 Նշանակված օպերատորների միջեւ հաշվապահական հաշվառման ժամանակ ծառայողական ծանրոցների եւ ռազմագերիների եւ քաղաքացիական ներկայված անձանց ծանրոցների մասով վճարներ չեն գանձվում՝ բառացությամբ օդային ծանրոցների նկատմամբ կիրառվող օդային փոխադրումների վճարների:

### 3 Կույրերի համար նախատեսված առաքանիները

3.1 Կույրերի համար նախատեսված ցանկացած առաքանի, որն ուղարկվել է կույրերի համար նախատեսված կազմակերպություն կամ վերջինիս կողմից կամ ուղարկվել է որեւէ կույր անձի կամ նրա կողմից, ազատվում է փոստային բոլոր

վճարներից՝ բացառությամբ օդային լրացուցիչ վճարների, այնքանով, որքանով այս առաքանիները որպես այդպիսին ընդունելի են ուղարկող նշանակված օպերատորի կողմից մատուցվող ներքին ծառայությունների շրջանակներում:

### 3.2 Սույն հոդվածում՝

3.2.1 «կույր անձ» նշանակում է անձ, որն իր երկրում գրանցված է որպես կույր կամ թույլ տեսողություն ունեցող անձ կամ անձ, որը համապատասխանում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կույր անձի կամ թույլ տեսողություն ունեցող անձի սահմանմանը,

3.2.2 «կույրերի համար նախատեսված կազմակերպություն» նշանակում է կույր անձանց սպասարկող կամ նրանց պաշտոնապես ներկայացնող հաստատություն կամ ասոցիացիա,

3.2.3 «կույրերի համար նախատեսված առաքանիները» ներառում են նամակագրություն, ցանկացած ձեռաչափով գրականություն, այդ թվում՝ ձայնագրություններ, ինչպես նաև ցանկացած տեսակի սարքավորում կամ նյութ, որոնք պատրաստված կամ նախատեսված են կույր անձանց՝ կույրության հետ կապված խնդիրները հաղթահարելիս օգնություն ցուցաբերելու համար՝ Կանոնակարգերով սահմանված կարգով:

## **Բաժին IV**

### **Հիմնական եւ հավելյալ ծառայությունները**

#### **Հոդված 17**

##### **Հիմնական ծառայությունները**

1 Անդամ երկրները պետք է ապահովեն, որ իրենց նշանակված օպերատորներն ընդունեն, մշակեն, փոխադրեն եւ առաքեն գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները:

2 Միայն փաստաթղթեր պարունակող՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները հետեւյալն են.

2.1 առաջնահերթ առաքանիներ եւ ոչ առաջնահերթ առաքանիներ՝ մինչեւ 2 կիլոգրամ քաշով,

2.2 նամակներ, փոստային բացիկներ եւ տպագրված առաքանիներ՝ մինչեւ 2 կիլոգրամ քաշով,

2.3 մինչեւ 7 կիլոգրամ քաշով առաքանիներ՝ նախատեսված կույրերի համար,

2.4 մինչեւ 30 կիլոգրամ քաշով, «Մ պարկեր» կոչվող՝ ամսագրեր, պարբերականներ, գրքեր եւ նմանատիպ տպագիր փաստաթղթեր պարունակող հատուկ պարկեր՝ նախատեսված նույն հասցեատիրոջ համար, նույն հասցեով:

3 Ապրանքներ պարունակող գրավոր նամակագրական առաքանիները հետեւյալն են.

3.1 առաջնահերթ եւ ոչ առաջնահերթ փոքր փաթեթներ՝ մինչեւ 2 կիլոգրամ քաշով,

3.2 մինչեւ 7 կիլոգրամ քաշով առաքանիներ՝ նախատեսված կույրերի համար, ինչպես նշված է Կանոնակարգերում,

3.3 մինչեւ 30 կիլոգրամ քաշով, «Մ պարկեր» կոչվող՝ ամսագրեր, պարբերականներ, գրքեր եւ նմանատիպ տպագիր փաստաթղթեր պարունակող հատուկ պարկեր՝ նախատեսված նույն հասցեատիրոջ համար, նույն հասցեով, ինչպես նշված է Կանոնակարգերում:

4 Գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները դասակարգվում են միաժամանակ ինչպես ըստ դրանց մշակման արագության, այնպես էլ առաքանիների պարունակության՝ համաձայն Կանոնակարգերի:

5 Չորրորդ կետով նշված դասակարգման համակարգերում գրավոր նամակագրական առաքանիները, ըստ իրենց ձեւաչափի, կարող են դասակարգվել որպես փոքր նամակներ (P), մեծ նամակներ (G), ծավալուն նամակներ (E) կամ փոքր փաթեթներ (E): Չափի եւ քաշի սահմանաչափերը նշված են Կանոնակարգերում:

6 Երկրորդ եւ երրորդ կետերում քաշի նշված սահմանաչափերից ավելի բարձր սահմանաչափեր գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների որոշ կատեգորիաների նկատմամբ կիրառվում են կամընտիր կերպով՝ Կանոնակարգերով նշված պայմանների համաձայն:

7 Անդամ երկրներն ապահովում են նաեւ, որ իրենց նշանակված օպերատորներն ընդունեն, մշակեն, փոխադրեն եւ առաքեն մինչեւ 20 կիլոգրամ քաշ ունեցող ծանրոց հանդիսացող փոստային առաքանիները:

8 Քսան կիլոգրամը գերազանցող քաշի սահմանափակումները կամընտիր կերպով կիրառվում են փոստային ծանրոց հանդիսացող որոշ առաքանիների նկատմամբ՝ համաձայն Կանոնակարգերում նշված պայմանների:

## **Հոդված 18**

### **Հավելյալ ծառայությունները**

1 Անդամ երկրները պետք է ապահովեն հետեւյալ պարտադիր հավելյալ ծառայությունների տրամադրումը.

1.1 ելքային պատվիրված առաջնահերթ եւ ավիափոստային գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ծառայություն,

1.2 մուտքային պատվիրված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների ծառայություն:

2 Անդամ երկրները կարող են ապահովել հետեւյալ կամընտիր լրացուցիչ ծառայությունների տրամադրումն այն նշանակված օպերատորների միջեւ հարաբերությունների շրջանակներում, որոնք համաձայնել են տրամադրել այդ ծառայությունը՝

2.1 գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոց հանդիսացող առաքանիների ապահովագրություն,

2.2 վերադիր վճարով ծառայություն՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոց հանդիսացող առաքանիների համար,

2.3 գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների՝ հետեւելու հնարավորությամբ առաքում,

2.4 պատվիրված կամ ապահովագրված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների անձամբ առաքումը հասցեատիրոջը,

2.5 գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոց հանդիսացող առաքանիների՝ առանց գանձումների եւ վճարների առաքման ծառայություն,

2.6 դյուրաբեկ եւ մեծածավալ ծանրոցների ծառայություններ,

2.7 մեկ բեռնառաքողից արտասահման ուղարկված խմբավորված առաքանիների բեռնափոխադրման ծառայություն,

2.8 գնված ապրանքների վերադարձման ծառայություն, որը ներառում է ապրանքի վերադարձը հասցեատիրոջ կողմից սկզբնական վաճառողին՝ վերջինիս թույլտվությամբ:

3 Հետեւյալ լրացուցիչ երեք ծառայություններն ունեն թե՛ պարտադիր, թե՛ ընտրովի բաղադրիչներ՝

3.1 Պատասխանի ստացմամբ միջազգային բիզնես նամակագրության ծառայություն (IBRS), որը հիմնականում կամընտրական է: Այնուամենայնիվ, բոլոր անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորները պարտավորվում են գործարկել IBRS-ի «վերադարձի» ծառայությունը:

3.2 Միջազգային պատասխան կտրոնները կարող են փոխանակվել ցանկացած անդամ երկրում: Միջազգային պատասխան կտրոնների վաճառքը, սակայն, կամընտրական է:

3.3 Պատվիրված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների, ծանրոցների եւ ապահովագրված առաքանիների ստացման մասին ծանուցում: Բոլոր անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորներն ընդունում են մուտքային առաքման մասին ծանուցումը: Առաքման մասին ելքային ծանուցման ծառայության տրամադրումը, սակայն, կամընտրական է:

4 Այս ծառայությունների նկարագրությունը եւ նրանց վճարները սահմանված են Կանոնակարգերով:

5. Եթե ստորեւ բերված ծառայությունների համար ներպետական ծառայությունների շրջանակներում պահանջվում են հատուկ վճարներ, ապա նշանակված օպերատորներն իրավունք ունեն միջազգային առաքանիների համար գանձելու նույն վճարները՝ համաձայն Կանոնակարգերով նկարագրված պայմանների՝

5.1 500 գրամից ավել կշռող փոքր փաթեթների առաքում,

5.2 ուղարկելու ամենաուշ ժամկետից հետո ուղարկվող գրավոր նամակագրական առաքանիներ,

5.3 օպերացիոն պատուհանների աշխատանքային ժամերից դուրս ուղարկվող առաքանիներ,

5.4 առաքանին վերցնելն ուղարկողի հասցեից,

5.5 գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների հետկանչում օպերացիոն պատուհանների աշխատանքային ժամերից դուրս,

5.6 *poste restante* (առաքանին փոստային բաժանմունքում պահելը մինչեւ հասցեատիրոջ մոտենալը),

5.7 500 գրամից ծանր կշռող գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների եւ ծանրոցների (բացառությամբ կույրերի համար նախատեսված առաքանիների) պահեստավորում,

5.8 ծանրոցների առաքում՝ ի պատասխան ստացման մասին ծանուցման,

5.9 անհաղթահարելի ուժի ազդեցության հետ կապված ռիսկերից երաշխավորում,

5.10 գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների առաքում օպերացիոն պատուհանների աշխատանքային ժամերից դուրս:

## **Բաժին V**

### **Արգելքները եւ մաքսային հարցերը**

#### **Հոդված 19**

#### **Ընդունման ոչ ենթակա առաքանիները: Արգելված առաքանիները**

1 Ընդհանուր դրույթներ

1.1 Կոնվենցիայով եւ Կանոնակարգերով սահմանված պայմաններին չհամապատասխանող առարկաները չեն ընդունվում: Այն առաքանիները, որոնք ուղարկվել են խարդախության արդյունքում կամ համապատասխան վճարների լրիվ վճարումից խուսափելու նպատակով, չեն ընդունվում:

1.2 Սույն հոդվածով սահմանված՝ արգելված առաքանիների մասով բացառությունները սահմանվում են Կանոնակարգերով:



1.3 Բոլոր անդամ երկրները կամ նրանց նշանակված օպերատորներն իրավունք ունեն ընդլայնելու սույն հոդվածով սահմանված՝ արգելված առաքանիների շրջանակը, որը կարող է կիրառվել համապատասխան համառոտագրում ներառվելուց անմիջապես հետո: Ցանկացած անդամ երկիր կամ նրա նշանակված օպերատոր, որը ցանկանում է ընդլայնել կամ փոփոխել այն առարկաների ցանկը, որն արգելում կամ պայմանականորեն ընդունում է որպես ներմուծված (կամ տարանցված) ապրանք, տեղեկացնում է Միջազգային բյուրոյին, որն այնուհետեւ թարմացնում է համապատասխան համառոտագրերը:

## 2 Առաքանիների բոլոր կատեգորիաների մասով արգելքները

2.1 Ստորեւ նշված առարկաների ներառումն արգելվում է առաքանիների բոլոր կատեգորիաների մեջ.

2.1.1 Թմրամիջոցների վերահսկման միջազգային խորհրդի կողմից սահմանված թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր կամ վերջնակետ երկրում արգելված ապօրինի այլ թմրանյութեր,

2.1.2 անպարկեշտ կամ անբարոյական բնույթի առարկաներ,

2.1.3 կեղծմամբ կամ հեղինակային իրավունքի խախտմամբ ձեռք բերված առարկաներ,

2.1.4 այլ առարկաներ, որոնց ներմուծումը կամ շրջանառությունն արգելվում է վերջնակետ երկրում,

2.1.5 առարկաներ, որոնք իրենց բնույթով կամ փաթեթավորմամբ կարող են վտանգի ենթարկել փոստի աշխատակիցներին կամ բնակչությանը կամ կարող են աղտոտել կամ վնաս հասցնել այլ առաքանիներին, փոստային սարքավորումների կամ երրորդ կողմին պատկանող գույքի,

2.1.6 ընթացիկ եւ անձնական նամակագրության բնույթ ունեցող փաստաթղթեր, որոնք փոխանակվում են այլ անձանց միջեւ, որոնք ուղարկող եւ հասցեատեր կամ նրանց հետ ապրող անձինք չեն,

## 3 Վտանգավոր ապրանքները

3.1 Կոնվենցիայում եւ Կանոնակարգերում նկարագրված վտանգավոր ապրանքների ներառումը որեւէ կատեգորիայի առաքանիում արգելվում է:

3.2 Չլիցքավորված պայթուցիկ սարքերի եւ զինամթերքի, ներառյալ՝ չլիցքավորված նռնակների, պարկուճների եւ նմանատիպ այլ իրերի, ինչպես նաեւ այդպիսի սարքերի եւ իրերի նմանակների ներառումը որեւէ կատեգորիայի առաքանիում արգելվում է:

3.3 Որպես բացառություն՝ վտանգավոր ապրանքները կարող են ընդունվել այն անդամ երկրների միջեւ, որոնք հայտնել են փոխադարձության սկզբունքով կամ մեկ ուղղությամբ այդ ապրանքներն ընդունելու իրենց պատրաստակամության մասին՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն ազգային եւ միջազգային փոխադրման

կանոններին եւ կանոնակարգերին:

4 Կենդանի կենդանիները

4.1 Կենդանի կենդանիների ուղարկումը որեւէ կատեգորիայի առաքանիով արգելվում է:

4.2 Որպես բացառություն, բացի ապահովագրված առաքանիներից, թույլատրվում է ներքոշարադրյալների ուղարկումը գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներով՝

4.2.1 մեղուներ, տզրուկներ եւ շերամորդեր,

4.2.2 մակաբույծներ եւ վնասակար միջատներ ոչնչացնողներ, որոնք նախատեսված են այդ միջատների դեմ պայքարի համար եւ փոխանակվում են պաշտոնապես ճանաչված հաստատությունների միջեւ,

4.2.3 դրոզոֆիլների ընտանիքին պատկանող ճանճեր՝ կենսաբժշկական հետազոտությունների համար, որոնք փոխանակվում են պաշտոնապես ճանաչված հաստատությունների միջեւ:

4.3 Որպես բացառություն՝ թույլատրվում է հետեւյալների ներառումը ծանրոցներում.

4.3.1 կենդանի կենդանիներ, որոնց փոստային փոխադրումը թույլատրվում է փոստային կանոնակարգերով եւ(կամ) համապատասխան երկրների ազգային օրենսդրությամբ:

5 Ծանրոցներում նամակագրության ներառումը

5.1 Արգելվում է ստորեւ նշված առարկաների ներառումը փոստային ծանրոցներում.

5.1.1 նամակագրություն (բացառությամբ արխիվացված նյութերի), որը փոխանակվում է այն անձանց միջեւ, որոնք ուղարկող եւ հասցեատեր կամ նրանց հետ ապրող անձինք չեն:

6 Մետաղադրամներ, թղթադրամներ եւ այլ արժեքավոր առարկաներ

6.1 արգելվում է ներառել մետաղադրամներ, թղթադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր կամ արժեքավոր այլ առարկաներ՝

6.1.1 չապահովագրված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներում,

6.1.1.1 այնուամենայնիվ, ծագման եւ վերջնակետ երկրների ներպետական օրենսդրությամբ թույլատրվելու դեպքում այդ առարկաները կարող են ուղարկվել փակ ծրարով՝ որպես պատվիրված առաքանիներ,

6.1.2 չապահովագրված ծանրոցներում՝ բացառությամբ, եթե դա թույլատրվում է ծագման եւ վերջնակետ երկրների ներպետական օրենսդրությամբ,

6.1.3 ապահովագրված ծանրոցներ ընդունող երկու երկրների միջև փոխանակված չապահովագրված ծանրոցներում,

6.1.3.1 բացի այդ, ցանկացած անդամ երկիր կամ նշանակված օպերատոր կարող է արգելել ոսկու ձուլակտորների ներառումն ապահովագրված կամ չապահովագրված ծանրոցներում, որոնք ծագում են իրենց տարածքից կամ հասցեագրված են այդ տարածք կամ ուղարկվում են բաց տարանցմամբ իրենց տարածքով. այն կարող է սահմանափակել այդ առաքանիների փաստացի արժեքը:

7 Կույրերի համար տպագրված փաստաթղթերը եւ առաքանիները՝

7.1 չպետք է կրեն որեւէ մակագրություն կամ պարունակեն նամակագրության որեւէ նյութ,

7.2 չպետք է ներառեն փոստային նամականիշ կամ կանխավճարային վճարամիջոց՝ անկախ նրանից՝ դրանք չեղարկվել են, թե՛ ոչ, կամ դրամական արժեք ներկայացնող որեւէ փաստաթուղթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաքանին առդիրի տեսքով պարունակում է քարտ, ծրար կամ փաթեթավորում, որը կրում է առաքանին ուղարկողի կամ նրա գործակալի՝ այն սկզբնական առաքանու ուղարկման կամ վերջնակետ երկրի տպագիր հասցեն, որը վերադարձնելու համար կանխավճար է կատարվել:

8 Սխալմամբ ընդունված առաքանիների հետ վարվելու կարգը

8.1 Սխալմամբ ընդունված առաքանիների հետ վարվելու կարգը սահմանված է Կանոնակարգերով: Այնուամենայնիվ, 2.1.1, 2.1.2, 3.1 եւ 3.2 կետերում նշված առարկաներ պարունակող առաքանիները որեւէ պարագայում չեն կարող ուղարկվել դրանց վերջնակետ երկիր, առաքվել հասցեատերերին կամ վերադարձվել ծագման երկիր: Եթե 2.1.1 կետով նշված առարկաները հայտնաբերվել են տարանցման մեջ գտնվելու ընթացքում, ապա այդ առաքանիների հետ կապված հարցերը կարգավորվում են տարանցման երկրի ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե փոխադրման ընթացքում հայտնաբերվել են 3.1 եւ 3.2 կետերում նշված առարկաներ, ապա համապատասխան օպերատորն իրավասու է առարկան առաքանուց հեռացնել կամ այն տնօրինել: Նշանակված օպերատորն այնուհետեւ կարող է առաքանու մնացած մասն ուղարկել դրա վերջնակետ երկիր՝ անթույլատրելի առարկան տնօրինելու վերաբերյալ տեղեկությունների հետ միասին:

**Հոդված 20****Մաքսային հսկողությունը: Մաքսատուրքը եւ այլ վճարներ**

1 Ծագման եւ վերջնակետ երկրների նշանակված օպերատորներն իրավունք ունեն առաքանիներ ներկայացնելու մաքսային հսկողության՝ համաձայն իրենց երկրների օրենսդրության:

2 Մաքսային հսկողության հանձնված առաքանիների համար կարող է գանձվել Մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճար, որի ուղենշային չափը սահմանված է Կանոնակարգերով: Այս վճարը գանձվում է միայն Մաքսատուն ներկայացնելու եւ այն առաքանիների մաքսազերծումն իրականացնելու համար, որոնց նկատմամբ կիրառվում են մաքսային վճարներ կամ նմանատիպ այլ ցանկացած վճարներ:

3 Այն նշանակված օպերատորները, որոնք լիազորված են առաքանիները մաքսազերծել հաճախորդների անունից՝ լինի դա հաճախորդի, թե վերջնակետ երկրի նշանակված օպերատորի անունից, կարող են հաճախորդներից գանձել մաքսազերծման վճար՝ հիմնվելով փաստացի ծախսերի վրա: Այս վճարը կարող է գանձվել Մաքսատանը հայտարարագրված բոլոր առաքանիների դիմաց՝ համաձայն ներպետական օրենսդրության, այդ թվում՝ նաեւ այն առաքանիների դիմաց, որոնք ազատված են մաքսատուրքից: Հաճախորդներին նախապես եւ հստակորեն տեղեկացվում է պահանջվող վճարի մասին:

4 Նշանակված օպերատորներն անհրաժեշտության դեպքում իրավունք ունեն առաքանիների ուղարկողներից կամ հասցեատերերից գանձելու մաքսատուրք եւ վճարման ենթակա այլ ցանկացած վճար:

**Բաժին VI****Պատասխանատվությունը****Հոդված 21****Բողոքները**

1 Ցանկացած նշանակված օպերատոր պարտավոր է ընդունել բողոքներ՝ կապված ծանրոցների կամ պատվիրված կամ ապահովագրված իրերի հետ, որոնք ուղարկվել են իր կամ նշանակված որեւէ այլ օպերատորի ծառայության շրջանակներում՝ պայմանով, որ բողոքները հաճախորդների կողմից ներկայացվեն առաքանու ուղարկման օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում: Նշանակված օպերատորների միջեւ բողոքների փոխանցումը եւ դրանց ընթացք տալը կատարվում է Կանոնակարգերով սահմանված պայմանների համաձայն: Վեցամսյա ժամկետը վերաբերում է բողոքը ներկայացնողի եւ նշանակված օպերատորների միջեւ

հարաբերություններին եւ չի ներառում նշանակված օպերատորների միջեւ բողոքների փոխանցումը:

2 Բողոքների ներկայացումն անվճար է: Սակայն ԱՓԾ-ով փոխանցելու հետ կապված լրացուցիչ ծախսերը, որպես կանոն, կրում է բողոք ներկայացնող անձը:

## **Հոդված 22**

### **Նշանակված օպերատորների պատասխանատվությունը: Փոխհատուցումը**

1 Ընդհանուր դրույթներ

1.1 Բացառությամբ 23-րդ հոդվածով նախատեսված դեպքերի՝ նշանակված օպերատորները պատասխանատվություն են կրում հետեւյալի համար.

1.1.1 պատվիրված առաքանիների, սովորական ծանրոցների (բացառությամբ էլեկտրոնային առետրի առաքման կատեգորիայի ծանրոցների (ECOMPRO ծանրոցներ) եւ ապահովագրված առաքանիների համար, որոնց բնութագրերը սահմանվում են Կանոնակարգերով) կորուստ, գողություն կամ դրանց հասցված վնաս,

1.1.2 պատվիրված, ապահովագրված առաքանիների եւ սովորական ծանրոցների վերադարձ, որոնց վրա չի նշվում չառաքելու պատճառը:

1.2 Նշանակված օպերատորները պատասխանատվություն չեն կրում 1.1.1 եւ 1.1.2 կետերում նշված առաքանիների բացի այլ առաքանիների, ինչպես նաեւ ECOMPRO ծանրոցների համար:

1.3 Սույն Կոնվենցիայով չնախատեսված որեւէ այլ դեպքում նշանակված օպերատորները պատասխանատվություն չեն կրում:

1.4 Եթե պատվիրված առաքանիների, սովորական ծանրոցների եւ ապահովագրված առաքանիների կորուստը կամ դրանց հասցված ամբողջական վնասը պայմանավորված է անհաղթահարելի ուժի ազդեցությամբ, որը ենթակա չէ փոխհատուցման, ապա ուղարկողն իրավասու է հետ ստանալ առաքանին ուղարկելու համար կատարված վճարները՝ բացառությամբ ապահովագրության վճարի:

1.5 Վճարման ենթակա փոխհատուցման գումարի չափը չի կարող գերազանցել Կանոնակարգերում նշված գումարի չափը:

1.6 Պատասխանատվության դեպքում անուղղակի կորուստները, բաց թողնված օգուտը կամ բարոյական վնասը հաշվի չեն առնվում փոխհատուցման գումարի հաշվարկման ժամանակ:

1.7 Նշանակված օպերատորների պատասխանատվությանը վերաբերող բոլոր դրույթները խիստ են, պարտադիր եւ ամբողջական: Նշանակված օպերատորները որեւէ դեպքում՝ նույնիսկ լուրջ մեղավորության դեպքում, չեն կարող պատասխանատվության ենթարկվել Կոնվենցիայով եւ Կանոնակարգերով

նախատեսված սահմանների շրջանակից դուրս:

## 2 Պատվիրված առաքանիները

2.1 Եթե պատվիրված առաքանին կորել, ամբողջությամբ գողացվել կամ վնասվել է, ապա ուղարկողն իրավունք ունի ստանալու Կանոնակարգերով սահմանված փոխհատուցումը: Եթե ուղարկողը պահանջել է Կանոնակարգերով սահմանված գումարից պակաս գումար, ապա նշանակված օպերատորները կարող են վճարել այդ ավելի ցածր գումարի չափը եւ դրա հիման վրա փոխհատուցում ստանալ ներգրավված որեւէ այլ նշանակված օպերատորի կողմից:

2.2 Եթե պատվիրված առաքանին գողացվել կամ վնասվել է մասամբ, ապա ուղարկողը, որպես կանոն, իրավունք ունի ստանալու գողության կամ հասցված վնասի փաստացի արժեքին համարժեք փոխհատուցում:

## 3 Սովորական ծանրոցները

3.1 Եթե ծանրոցը կորել, ամբողջությամբ գողացվել կամ վնասվել է, ապա ուղարկողն իրավունք ունի ստանալու Կանոնակարգերով սահմանված չափով փոխհատուցում: Եթե ուղարկողը պահանջել է Կանոնակարգերով սահմանված գումարից պակաս գումար, ապա նշանակված օպերատորները կարող են վճարել այդ ավելի ցածր գումարի չափը եւ դրա հիման վրա փոխհատուցում ստանալ ներգրավված որեւէ այլ նշանակված օպերատորի կողմից:

3.2 Եթե ծանրոցը գողացվել կամ վնասվել է մասամբ, ապա ուղարկողը, որպես կանոն, իրավունք ունի ստանալու գողության կամ հասցված վնասի փաստացի արժեքին համարժեք փոխհատուցում:

3.3 Նշանակված օպերատորները կարող են համաձայնության գալ փոխադարձ հարաբերություններում կիրառելու Կանոնակարգերով սահմանված մեկ ծանրոցի գումարը՝ անկախ քաշից:

## 4 Ապահովագրված առաքանիները

4.1 Եթե ապահովագրված առաքանին կորել է, ամբողջությամբ գողացվել կամ վնասվել, ապա ուղարկողը, որպես կանոն, իրավունք ունի ստանալու ՓՀԻ-ով ապահովագրված արժեքին համարժեք փոխհատուցում:

4.2 Եթե ապահովագրված առաքանին գողացվել կամ վնասվել է մասամբ, ապա ուղարկողը, որպես կանոն, իրավունք ունի ստանալու գողության կամ հասցված վնասի փաստացի արժեքին համարժեք փոխհատուցում: Այն սակայն որեւէ դեպքում չի կարող գերազանցել ՓՀԻ-ով արտահայտված ապահովագրված արժեքի գումարի չափը:

5 Եթե պատվիրված կամ ապահովագրված գրավոր նամակագրական առաքանին վերադարձվում է, եւ չառաքելու պատճառը չի նշվում, ապա ուղարկողն իրավասու է ստանալ միայն առաքանին ուղարկելու համար վճարված գումարը:

6 Եթե ծանրոցը վերադարձվում է, եւ չառաքելու պատճառը չի նշվում, ապա

ուղարկողն իրավասու է ստանալ ծագման երկրում ծանրոցն ուղարկելու համար իր կողմից վճարված գումարը եւ վերջնակետ երկրից ծանրոցը վերադարձնելու հետ կապված ծախսերը:

7 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով նշված դեպքերում փոխհատուցման գումարը հաշվարկվում է համաձայն նույն տեսակի առարկաների կամ ապրանքների՝ այն վայրում եւ այն ժամանակ ունեցած ընթացիկ գնով, երբ առաքանին ընդունվել է փոխադրման համար՝ փոխարկված ՓՀԻ-ի: Ընթացիկ (ցուցակային) գնի բացակայության դեպքում փոխհատուցման գումարը հաշվարկվում է ըստ այն առարկաների կամ ապրանքների սովորական արժեքի, որոնց արժեքը գնահատվում է նույն հիմքով:

8 Պատվիրված առաքանու, սովորական ծանրոցի կամ ապահովագրված առաքանու կորստի, ամբողջական գողության կամ ամբողջական վնասի դիմաց փոխհատուցման դեպքում ուղարկողը կամ հասցեատերն անհրաժեշտության դեպքում իրավասու է ստանալ նաեւ առաքանին ուղարկելու համար վճարած գանձումները եւ վճարները՝ բացառությամբ պատվիրման եւ ապահովագրության վճարների: Նույնը կիրառվում է հասցեատիրոջ կողմից վատ վիճակի պատճառով մերժված պատվիրված առաքանիների, սովորական ծանրոցների կամ ապահովագրված առաքանիների նկատմամբ, եթե այդ վիճակը կապված է նշանակված օպերատորի հետ, եւ նա է պատասխանատու դրա համար:

9 Չնայած 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով սահմանված դրույթներին՝ հասցեատերն իրավասու է փոխհատուցում ստանալ գողացված, վնասված կամ կորած պատվիրված առաքանու, սովորական ծանրոցի կամ ապահովագրված առաքանու համար, եթե ուղարկողը գրավոր կերպով հրաժարվում է իր իրավունքներից՝ հոգուտ հասցեատիրոջ: Հրաժարումն անհրաժեշտ չէ այն դեպքում, երբ ուղարկողը եւ հասցեատերը նույնն են:

10 Ծագման երկրի նշանակված օպերատորն իրավունք ունի պատվիրված առաքանիների եւ չապահովագրված ծանրոցների համար ուղարկողին վճարելու իր երկրի ներպետական օրենսդրությամբ սահմանված փոխհատուցումները՝ պայմանով, որ դրանք ավելի ցածր չլինեն 2.1 եւ 3.1 կետերում սահմանված գումարի չափից: Նույնը կիրառվում է նաեւ վերջնակետ երկրի նշանակված օպերատորի դեպքում, երբ փոխհատուցումը վճարվում է հասցեատիրոջը: Այնուամենայնիվ, 2.1 եւ 3.1 կետերով սահմանված գումարները շարունակում են կիրառվել՝

10.1 պատասխանատու նշանակված օպերատորի դեմ հակընդդեմ հայց ներկայացնելու դեպքում, կամ

10.2 եթե ուղարկողը հրաժարվում է իր իրավունքներից՝ հոգուտ հասցեատիրոջ:

11 Բողոքների եւ նշանակված օպերատորներին կատարվող

փոխհատուցումների վճարման ժամկետների, այդ թվում՝ Կանոնակարգերով սահմանված ժամկետների եւ պայմանների գերազանցման հետ կապված՝ վերապահումներ չեն կատարվում՝ բացառությամբ երկկողմ համաձայնագրի առկայության:

### **Հոդված 23**

#### **Անդամ երկրներին եւ նշանակված օպերատորներին պատասխանատվությունից ազատելը**

1 Նշանակված օպերատորները դադարում են պատասխանատվություն կրել պատվիրված այն առաքանիների, ծանրոցների եւ ապահովագրված առաքանիների համար, որոնք նրանք առաքել են իրենց կանոնակարգերում նմանատիպ բնույթի առաքանիների մասով սահմանված պայմաններով: Այնուամենայնիվ, պատասխանատվությունը պահպանվում է՝

1.1 եթե գողությունը կամ հասցված վնասը հայտնաբերվում է նախքան առաքանին հանձնելը կամ այդ պահին,

1.2 ներպետական օրենսդրությամբ թույլատրված դեպքերում, եթե առաքանին ծագման վայր վերադարձնելիս հասցեատերը կամ ուղարկողը գողացված կամ վնասված առաքանին ընդունելիս վերապահումներ է անում,

1.3 ներպետական օրենսդրությամբ թույլատրված դեպքերում, եթե պատվիրված առաքանին առաքվում է մասնավոր փոստարկղ, եւ հասցեատերը հայտնում է, որ չի ստացել առաքանին,

1.4 եթե հասցեատերը կամ ծագման վայր վերադարձնելու դեպքում ծանրոցը կամ ապահովագրված առաքանին ուղարկողը, չնայած պատշաճ կերպով տրված առաքման մասին հաստատման, անհապաղ ծանուցում է առաքանին հանձնած նշանակված օպերատորին գողության կամ հասցված վնասի հայտնաբերման մասին: Նա պետք է ապացույցներ ներկայացնի առ այն, որ այդպիսի գողությունը կամ վնասը չի հասցվել առաքանին հանձնելուց հետո: «Անհապաղ» եզրույթը մեկնաբանվում է համաձայն համապատասխան երկրի ներպետական օրենսդրության:

2 Անդամ երկրները եւ նշանակված օպերատորները չեն կարող պատասխանատվություն կրել՝

2.1 անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերում՝ համաձայն 18.5.9 հոդվածի,

2.2 երբ նրանք չեն կարողանում պատասխանատվություն կրել առաքանիների համար՝ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով պաշտոնական փաստաթղթերի ոչնչացման պատճառով, եթե չեն ներկայացվել իրենց պատասխանատվությունն ապացուցող այլ ապացույցներ,



2.3 երբ նման կորուստը կամ վնասը պատճառվել է ուղարկողի մեղքով կամ անփութությամբ կամ բխում է պարունակության բնույթից,

2.4 այն առաքանիների դեպքում, որոնք դասվում են 19-րդ հոդվածով նշված արգելված առաքանիների շարքին,

2.5 երբ առաքանիներն առգրավվել են վերջնակետ երկրի ներպետական օրենսդրության համաձայն՝ ըստ անդամ երկրի կամ այդ երկրի նշանակված օպերատորի կողմից ծանուցման,

2.6 այն ապահովագրված առաքանիների դեպքում, որոնք խաբեությամբ ապահովագրվել են պարունակության փաստացի արժեքից ավելի մեծ գումարի չափով,

2.7 երբ ուղարկողը բողոք չի ներկայացրել առաքանու ուղարկման օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում,

2.8 ռազմագերիների կամ ներկալված քաղաքացիական անձանց պատկանող ծանրոցների դեպքում,

2.9 երբ կասկած կա, որ ուղարկողն իրականացնում է խարդախություն՝ ուղղված փոխհատուցում ստանալուն:

3 Անդամ երկրները եւ նշանակված օպերատորները որեւէ պատասխանատվություն չեն կրում որեւէ ձեւով կազմված մաքսային հայտարարագրերի կամ մաքսային հսկողության հանձնված առաքանիների ուսումնասիրության արդյունքում Մաքսային մարմինների կողմից ընդունված որոշումների համար:

## **Հոդված 24**

### **Ուղարկողի պատասխանատվությունը**

1 Առաքանին ուղարկողը պատասխանատվություն է կրում փոստային ծառայողներին պատճառված վնասվածքների եւ փոստային այլ առաքանիների եւ փոստային սարքավորումների պատճառված ցանկացած վնասի համար՝ փոխադրման համար անընդունելի առարկաներ ուղարկելու կամ ընդունման պայմանները չկատարելու հետեւանքով:

2 Փոստային այլ առաքանիների պատճառված վնասի դեպքում ուղարկողը պատասխանատվություն է կրում վնասված յուրաքանչյուր առաքանու համար այն նույն չափով, ինչ նշանակված օպերատորները:

3 Ուղարկողը շարունակում է պատասխանատվություն կրել, եթե նույնիսկ ուղարկող գրասենյակն ընդունում է նման առաքանին:

4 Այնուամենայնիվ, եթե ուղարկողը պահպանել է ընդունման պայմանները,

ապա վերջինս պատասխանատվություն չի կրում, եթե նշանակված օպերատորները կամ փոխադրողները առաքանին ընդունելուց հետո դրա հետ աշխատելիս թույլ են տվել սխալ կամ անփութություն:

### **Հոդված 25**

#### **Փոխհատուցման վճարումը**

1 Պատասխանատու նշանակված օպերատորին փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունքի պահպանմամբ փոխհատուցում վճարելու եւ գանձումներն ու վճարները վերադարձնելու պարտավորությունը կրում է կա՛մ ծագման երկրի նշանակված օպերատորը, կա՛մ վերջնակետ երկրի նշանակված օպերատորը:

2 Ուղարկողը կարող է հրաժարվել փոխհատուցման իր իրավունքներից՝ հօգուտ հասցեատիրոջ: Հրաժարվելու դեպքում ուղարկողը կամ հասցեատերը կարող են լիազորել երրորդ կողմի՝ ներպետական օրենսդրությամբ թույլատրվելու դեպքում փոխհատուցումը ստանալու համար:

### **Հոդված 26**

#### **Փոխհատուցման գումարի հնարավոր հետվճարումն ուղարկողի կամ հասցեատիրոջ կողմից**

1 Եթե փոխհատուցման գումարը վճարվելուց հետո նախկինում կորած համարվող պատվիրված առաքանին, ծանրոցը կամ ապահովագրված առաքանին կամ դրանց պարունակության մի մասը գտնվում են, ապա ուղարկողը կամ հասցեատերը, ըստ կոնկրետ իրավիճակի, ծանուցվում է այն մասին, որ առաքանին կարող է հանձնվել իր տրամադրության տակ իրեն վճարված փոխհատուցման գումարի վճարման կատարումից հետո երեք ամիս ժամկետում: Միեւնույն ժամանակ նրան հարցնում են, թե ում պետք է հանձնվի առաքանին: Սահմանված ժամկետում հրաժարվելու կամ չպատասխանելու դեպքում հասցեատիրոջ կամ ուղարկողի նկատմամբ, ըստ կոնկրետ իրավիճակի, ցուցաբերվում է նույն մոտեցումը՝ այդ անձին տրամադրելով պատասխանելու համար նախատեսված նույն ժամանակահատվածը:

2 Եթե ուղարկողը կամ հասցեատերը հրաժարվում է ընդունել առաքումը կամ չի պատասխանում 1-ին կետով նախատեսված ժամկետներում, ապա այն դառնում է նշանակված օպերատորի կամ ըստ կոնկրետ իրավիճակի՝ այն նշանակված օպերատորների սեփականությունը, որոնք կրել են կորուստը:

3 Ապահովագրված ապրանքը հետագայում հայտնաբերելու դեպքում, եթե պարզվում է, որ դրա պարունակությունն ավելի քիչ արժեք ունի, քան վճարված փոխհատուցման գումարը, ուղարկողը կամ հասցեատերը, ըստ կոնկրետ

իրավիճակի, առաքանին վերադարձնելու պահին վերադարձնում է փոխհատուցման գումարը՝ առանց կեղծ ապահովագրության հետեւանքների համար պատասխանատվության բացառման:

## **ԲԱԺԻՆ VII**

### **Վարձատրությունը**

#### **Ա. Տարանցման վճարները**

##### **Հոդված 27**

#### **Տարանցման վճարները**

Նշանակված երկու օպերատորների կամ նույն անդամ երկրի երկու գրասենյակների միջեւ մեկ կամ մի քանի նշանակված այլ օպերատորների ծառայությունների (երրորդ կողմի ծառայությունների) միջոցով փոխանակված փոստային փակ առաքումների եւ բաց տարանցման մեջ գտնվող առաքանիների համար վճարվում է տարանցման վճար: Վերջինս ցամաքային, ծովային եւ օդային տարանցման հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրություն է: Սույն սկզբունքը կիրառվում է նաեւ սխալ հասցեագրված առաքանիների եւ սխալ առաքված փոստային առաքումների նկատմամբ:

#### **Բ. Վերջնական վճարները**

##### **Հոդված 28**

#### **Վերջնական վճարները: Ընդհանուր դրույթներ**

1 Կանոնակարգով նախատեսված բացառությունների պահպանմամբ՝ նշանակված յուրաքանչյուր օպերատոր, որը գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներ է ստանում մեկ այլ նշանակված օպերատորից, ունի ստացված միջազգային փոստային առաքման համար կրած ծախսերի վճարն ուղարկող նշանակված օպերատորից գանձելու իրավունք:

2 Նշանակված օպերատորների կողմից վերջնական վճարների վճարման վերաբերյալ դրույթների կիրառման համար երկրները եւ տարածքները դասակարգվում են համաձայն այս նպատակով Համագումարի կողմից C 7/2016 բանաձեւով կազմված ցուցակների՝ հետեւյալ կերպ.

2.1 նախքան 2010 թվականը թիրախային համակարգում ներառված երկրներ եւ տարածքներ (խումբ I),

2.2 2010 եւ 2012 թվականների դրությամբ թիրախային համակարգում

ներառված երկրներ եւ տարածքներ (խումբ II),

2.3 2016 թվականից թիրախային համակարգում ներառված երկրներ եւ տարածքներ (խումբ III),

2.4 անցումային համակարգում ներառված երկրներ եւ տարածքներ (խումբ IV):

3 Վերջնական վճարների վերաբերյալ սույն Կոնվենցիայի դրույթներն անցումային միջոցներ են, որոնք ուղղված են անցումային ժամանակահատվածի ավարտին վճարման համակարգի ստեղծմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի բնորոշ առանձնահատկությունները:

4 Ներքին ծառայություններին հասանելիությունը: Ուղղակի հասանելիությունը

4.1 Որպես կանոն, նախքան 2010 թվականը թիրախային համակարգում ներառված երկրների յուրաքանչյուր նշանակված օպերատոր նշանակված մյուս օպերատորներին տրամադրում է իր ներքին ծառայության շրջանակներում առաջարկվող բոլոր դրույթաչափերը եւ պայմաններն այն նույն պայմաններով, որոնք առաջարկում է իր ներպետական հաճախորդներին: Վերջնակետ երկրի նշանակված օպերատորն է որոշում, թե արդյոք ծագման երկրի նշանակված օպերատորի կողմից պահպանվել են ուղղակի հասանելիության մասով պայմանները, թե՛ ոչ:

4.2 Մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգում ներառված երկրների նշանակված օպերատորները մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգում ներառված երկրների մյուս նշանակված օպերատորներին առաջարկում են ներքին ծառայության շրջանակներում առաջարկվող դրույթաչափերը եւ պայմաններն այն նույն պայմաններով, որոնք առաջարկում են իր ներպետական հաճախորդներին:

4.3 2010 թվականից թիրախային համակարգին միացած երկրների նշանակված օպերատորները կարող են փոխադարձության սկզբունքով, երկու տարի փորձնական ժամկետով սահմանափակ թվով նշանակված օպերատորների առաջարկել իրենց ներքին ծառայության շրջանակներում գործող պայմանները: Այդ ժամկետից հետո նրանք պետք է ընտրեն կա՛մ դադարեցնել ներքին ծառայությունների շրջանակներում կիրառվող պայմանների առաջարկումը, կա՛մ շարունակել դրանց առաջարկումը նշանակված բոլոր օպերատորներին: Այնուամենայնիվ, եթե 2010 թվականից թիրախային համակարգին միացած երկրների նշանակված օպերատորները խնդրում են նախքան 2010 թվականը թիրախային համակարգում ներառված երկրների նշանակված օպերատորներին վերջիններիս ներքին ծառայությունների շրջանակներում կիրառվող պայմանները, ապա նրանք պետք է նշանակված բոլոր օպերատորներին առաջարկեն ներքին ծառայությունների շրջանակներում առաջարկվող բոլոր դրույթաչափերը եւ պայմաններն այն նույն պայմաններով, ինչ իրենց ներպետական հաճախորդներին առաջարկված պայմանները:

4.4 Անցումային համակարգում ներառված երկրների նշանակված օպերատորները կարող են իրենց հայեցողությամբ այլ նշանակված օպերատորների չառաջարկել իրենց ներքին ծառայությունների շրջանակներում կիրառվող պայմանները: Այնուամենայնիվ, նրանք կարող են փորձել փոխադարձության սկզբունքով, երկու տարի փորձնական ժամկետով սահմանափակ թվով նշանակված օպերատորներին առաջարկել ներքին ծառայությունների շրջանակներում գործող պայմանները: Այդ ժամկետից հետո նրանք պետք է ընտրեն կա՛մ դադարեցնել ներքին ծառայությունների շրջանակներում կիրառվող պայմանների առաջարկումը, կա՛մ շարունակել դրանց առաջարկումը նշանակված բոլոր օպերատորներին:

5 Վերջնական վճարների վարձատրությունը հիմնված է վերջնակետ երկրում ծառայությունների կատարման որակի վրա: Ուստի Փոստային գործառնությունների խորհուրդն իրավունք ունի 29-րդ, 30-րդ եւ 31-րդ հոդվածում ավելացնելու վարձատրությունը՝ խրախուսելու մոնիթորինգի համակարգերում մասնակցությունը եւ պարգեատրելու նշանակված օպերատորներին՝ իրենց որակի թիրախներին հասնելու համար: Փոստային գործառնությունների խորհուրդը կարող է նաեւ տույժեր սահմանել անբավարար որակի դեպքում, սակայն վարձատրությունը չպետք է պակաս լինի 30-րդ եւ 31-րդ հոդվածներով սահմանված նվազագույն վարձատրության չափից:

6 Նշանակված ցանկացած օպերատոր կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել 1-ին կետով նախատեսված վճարումից:

7 Վերջնական վճարները վճարելու նպատակով 5 կիլոգրամից պակաս կշռող M պարկերը համարվում են որպես 5 կիլոգրամ կշռող պարկեր: M պարկերի նկատմամբ կիրառվող վերջնական վճարների դրույքաչափերը հետեւյալն են.

- 7.1 2022 թվականին՝ մեկ կիլոգրամը 1.016 ՓՀԻ,
- 7.2 2023 թվականին՝ մեկ կիլոգրամը 1.044 ՓՀԻ,
- 7.3 2024 թվականին՝ մեկ կիլոգրամը 1.073 ՓՀԻ,
- 7.4 2025 թվականին՝ մեկ կիլոգրամը 1.103 ՓՀԻ:

8 2022 թվականին յուրաքանչյուր պատվիրված առաքանու համար լրացուցիչ գանձվում է 1.463 ՓՀԻ, 2023 թվականին յուրաքանչյուր առաքանու համար՝ 1.529 ՓՀԻ, 2024 թվականին յուրաքանչյուր առաքանու համար՝ 1.598 ՓՀԻ եւ 2025 թվականին՝ 1.670 ՓՀԻ: 2022 թվականին յուրաքանչյուր ապահովագրված առաքանու համար լրացուցիչ գանձվում է 1.777 ՓՀԻ, 2023 թվականին յուրաքանչյուր առաքանու համար՝ 1.857 ՓՀԻ, 2024 թվականին յուրաքանչյուր առաքանու համար՝ 1.941 ՓՀԻ եւ 2025 թվականին՝ 2.028 ՓՀԻ: Փոստային գործառնությունների խորհուրդն իրավունք ունի ավելացնելու վարձատրությունը այս եւ այլ լրացուցիչ ծառայությունների մասով, եթե մատուցվող ծառայությունները պարունակում են Կանոնակարգերով սահմանման ենթակա լրացուցիչ բաղադրիչներ:

9 Առաքման հետագծվող ծառայությամբ առաքանիների մասով մեկ առաքանու դիմաց վճարվելու է հավելյալ 0.400 ՓՀԻ՝ Կանոնակարգերով նշված պայմաններին համապատասխան: Փոստային գործառնությունների խորհուրդն իրավունք ունի ավելացնելու հետագծվող ծառայության առաքանիների մասով վարձատրությունը՝ հիմնվելով տեղեկությունների էլեկտրոնային փոխանցման արդյունքների վրա՝ Կանոնակարգերով սահմանված կարգով:

10 Երկկողմ համաձայնության բացակայության դեպքում փոքր փաթեթների, պատվիրված ու ապահովագրված եւ հետագծվող առաքման ծառայությամբ առաքանիների դեպքում, որոնք չեն կրում գծակողով նույնականացուցիչ կամ կրում են գծակողով այնպիսի նույնականացուցիչ, որը չի համապատասխանում Միության տեխնիկական ստանդարտ S10-ին, յուրաքանչյուր առաքանու համար վճարվում է հավելյալ 0.5 ՓՀԻ:

11 Փոստային գործառնությունների խորհուրդն իրավունք ունի ավելացնելու վարձատրությունը եւ (կամ) սահմանելու տույժեր՝ կապված նշանակված օպերատորների կողմից ապրանքներ պարունակող գրավոր նամակագրական առաքանիների վերաբերյալ էլեկտրոնային առաջնակարգ տվյալների տրամադրման պահանջներին համապատասխանելու հետ:

12 Առաքման ոչ ենթակա վերադարձված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների դիմաց վարձատրությունը սահմանվում է Կանոնակարգերով:

13 Վերջնական վճարների վճարման նպատակներով Կանոնակարգերում նշված պայմանների համաձայն մեծ ծավալներով ուղարկված գրավոր նամակագրական առաքանիները կոչվում են «ծավալուն փոստային առաքումներ»: Ծավալուն փոստային առաքումների դիմաց վճարումը, ըստ կոնկրետ իրավիճակի, սահմանվում է 29-րդ, 30-րդ եւ 31-րդ հոդվածներով նախատեսված կարգով:

14 Ցանկացած նշանակված օպերատոր կարող է երկկողմ կամ բազմակողմ համաձայնությամբ վերջնական վճարների հաշվարկների համար կիրառել վճարման այլ համակարգեր:

15 Նշանակված օպերատորները կարող են կամընտիր հիմունքներով փոխանակել ոչ առաջնահերթ փոստային առաքումները՝ առաջնահերթ համարվող վերջնական վճարների դրույքաչափերի նկատմամբ կիրառելով 10% զեղչ:

16 Թիրախային համակարգում ներառված նշանակված օպերատորների միջեւ կիրառվող դրույթները կիրառվում են անցումային համակարգում գտնվող որեւէ երկրի նշանակված ցանկացած օպերատորի նկատմամբ, որը հայտնում է թիրախային համակարգին միանալու ցանկության մասին: Փոստային գործառնությունների խորհուրդը կարող է Կանոնակարգերում սահմանել անցումային միջոցներ: Թիրախային համակարգի ամբողջական դրույթները կարող են կիրառվել թիրախային

ցանկացած նոր նշանակված օպերատորի նկատմամբ, որը հայտնում է նման ամբողջական դրույթները կիրառելու ցանկության մասին՝ առանց անցումային միջոցների:

## **Հոդված 29**

### **Վերջնական վճարները: Ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով դրույքաչափերի ինքնահայտարարագրումը**

1 Սկսելով 2021 թվականից ի վեր ուժի մեջ գտնվող դրույքաչափերից եւ չնայած 30-րդ եւ 31-րդ հոդվածներին՝ նշանակված օպերատորները մինչեւ այն տարվան նախորդող տարվա հունիսի 1-ը, որի ընթացքում պետք է կիրառվեն ինքնահայտարարագրված դրույքաչափերը, կարող են ծանուցել Միջազգային բյուրոյին մեկ առաքանու համար ինքնահայտարարագրված դրույքաչափի եւ մեկ կիլոգրամի համար ինքնահայտարարագրված դրույքաչափի մասին՝ արտահայտված տեղական արժույթով կամ ՓՀԻ-ով, որը կիրառվելու է ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ հաջորդ օրացուցային տարվա ընթացքում: Միջազգային բյուրոն տեղական արժույթով ներկայացված ինքնահայտարարագրված դրույքաչափերը տարեկան կտրվածքով փոխարկում է ՓՀԻ-ով արտահայտված արժեքներով: Դրույքաչափերը ՓՀԻ-ով հաշվարկելու համար Միջազգային բյուրոն կիրառում է այն հնգամյա ժամկետի ամսական միջին փոխարժեքը, որն ավարտվում է այն տարվան նախորդող տարվա մարտի 31-ին, որի ընթացքում կիրառվելու են ինքնահայտարարագրված դրույքաչափերը: Ստացված դրույքաչափերի մասին ծանուցվում է Միջազգային բյուրոյի շրջաբերականի միջոցով ոչ ուշ, քան այն տարվան նախորդող տարվա հուլիսի 1-ը, որի ընթացքում կիրառվելու են ինքնահայտարարագրված դրույքաչափերը: Ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների ինքնահայտարարագրված դրույքաչափերը փոխվում են Կոնվենցիայի կամ Կանոնակարգերի համապատասխան մասերում պարունակվող՝ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների վերաբերյալ բոլոր հղումներում կամ դրույքաչափերի հաշվարկներում: Բացի այդ, յուրաքանչյուր նշանակված օպերատոր Միջազգային բյուրոյին տրամադրում է համարժեք ծառայությունների համար իր ներքին դրույքաչափերը՝ համապատասխան սահմանային տոկոսադրույքը հաշվելու համար:

1.1 1.2 եւ 1.3 կետերի պահպանմամբ՝ ինքնահայտարարագրված դրույքաչափերը պետք է՝

1.1.1 միջինում 0.158 կիլոգրամ կշռով E ձեւաչափի դեպքում չլինեն ավելի բարձր, քան երկրին բնորոշ սահմանային դրույքաչափերը՝ հաշվարկված 1.2 կետի համաձայն:

1.1.2 հիմնված լինեն ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական այն առաքանիների ներպետական ծառայության շրջանակներում սահմանված մեկ կտորի դիմաց վճարվող վճարի 70%-ի կամ 8-րդ կետում նշված կիրառելի տոկոսի վրա, որոնք առաջարկվում են իր ներպետական ծառայության շրջանակներում նշանակված օպերատորի կողմից եւ ուժի մեջ են մտել այն տարվան նախորդող տարվա հունիսի 1-ից, որի ընթացքում կիրառվելու են ինքնահայտարարագրված դրույքաչափերը,

1.1.3 հիմնված լինեն մեկ կտորի համար ներպետական ծառայության շրջանակներում սահմանված վճարվող վճարի վրա, որը գործում է նշանակված օպերատորի ներպետական ծառայության շրջանակներում գտնվող այն առաքանիների համար, որոնք ունեն ծավալուն եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով սահմանված առավելագույն չափի եւ ձեւի առավելագույն սահմանաչափեր,

1.1.4 հասանելի դառնան նշանակված բոլոր օպերատորներին,

1.1.5 կիրառվեն միայն ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ,

1.1.6 կիրառվեն բոլոր ծավալուն (E) եւ փոքր (E) նամակագրական առաքանիների հոսքերի նկատմամբ՝ բացառությամբ անցումային համակարգի երկրներից թիրախային համակարգի երկրներին փոխանցվող ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների հոսքերի, ինչպես նաեւ անցումային համակարգի երկրների միջեւ առաքանիների հոսքերի, եթե փոստային առաքումների հոսքերը չեն գերազանցում տարեկան 100 տոննան,

1.1.7 կիրառվեն բոլոր ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների հոսքերի նկատմամբ՝ բացառությամբ 2010, 2012 եւ 2016 թվականներից թիրախային համակարգում ներառված երկրների միջեւ եւ այդ երկրներից մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգում երկրներին փոխանցվող ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական հոսքերի նկատմամբ, եթե փոստային առաքումների հոսքերը չեն գերազանցում տարեկան 25 տոննան:

1.2 Ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի համար ինքնահայտարարագրված դրույքաչափերը չեն կարող բարձր լինել երկրի սահմանային դրույքաչափերից, որոնք որոշվում են 20 գրամ, 35 գրամ, 75 գրամ, 175 գրամ, 250 գրամ, 375 գրամ, 500 գրամ, 750 գրամ, 1000 գրամ, 1500 գրամ, 2000 գրամ քաշ ունեցող ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների եւ առանց որեւէ հարկի առաքանիների համարժեք ներպետական ծառայությունների շրջանակներում առաջնահերթ համարվող մեկ կտորի դիմաց վճարվող սակագնի 70%-ին համապատասխան 11 կետերի գծային ռեգրեսիայով:



1.2.1 Որոշումն այն մասին, թե արդյոք ինքնահայտարարագրված դրույքաչափերը գերազանցում են սահմանային դրույքաչափերը, թե՛ ոչ, փորձարկվում է միջին եկամտի հիման վրա՝ օգտագործելով փոստային առաքման մեկ կիլոգրամի համար համաշխարհային ամենավերջին միջին կազմը, որում E ձեռագրված առաքանին կշռում է 0.158 կիլոգրամ: Այն դեպքերում, երբ ինքնահայտարարագրված դրույքաչափերը գերազանցում են 0.158 կիլոգրամի E ձեռագրված միջին քաշի դեպքում սահմանվող սահմանային դրույքաչափերը, կիրառվում են մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի հաշվով սահմանային դրույքաչափերը. որպես այլընտրանք՝ տվյալ նշանակված օպերատորը կարող է որոշել նվազեցնել իր ինքնահայտարարագրված դրույքաչափերը՝ հասցնելով դրանք 1.2 կետով սահմանված մակարդակին:

1.2.2 Երբ առկա են փաթեթների մի քանի դրույքաչափեր՝ ըստ հաստության, մինչեւ 250 գրամ քաշ ունեցող առաքանիների դեպքում կիրառվում է ներպետական ավելի ցածր սակագին, իսկ 250 գրամից ավել քաշ ունեցող առաքանիների դեպքում կիրառվում է ներպետական ավելի բարձր սակագին:

1.2.3 Եթե համարժեք ներքին ծառայության շրջանակներում կիրառվում են գոտիական դրույքաչափեր, ապա օգտագործվում է Կանոնակարգերով սահմանված միջին դրույքաչափը, իսկ միջին դրույքաչափը որոշելու համար բացառվում են ոչ հարակից գոտիների ներպետական սակագները: Որպես այլընտրանք՝ կիրառման ենթակա գոտիական սակագնի որոշումը կարող է հիմնված լինել ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրություն պարունակող առաքանիների կշռված փաստացի միջին հեռավորության վրա (օրացուցային ամենավերջին տարվա համար):

1.2.4 Եթե համարժեք ներպետական ծառայությունը եւ սակագինը ներառում են հիմնական ծառայության մասը չկազմող լրացուցիչ բաղադրիչներ, օրինակ՝ առաքանուն հետեւելը, ստորագրման եւ ապահովագրության ծառայությունները, եւ նման բաղադրիչները տարածվում են 1.2 կետում թվարկված քաշի բոլոր ավելացումների վրա, ապա համապատասխան ներպետական ավելի ցածր լրացուցիչ դրույքաչափը, լրացուցիչ դրույքաչափը կամ Միության ակտերում առաջարկված ուղենշային վճարը հանվում են ներպետական սակագնից: Լրացուցիչ բոլոր բաղադրիչների մասով ընդհանուր նվազեցումը չի կարող գերազանցել ներպետական սակագնի 25%-ը:

1.3 Եթե 1.2 կետի համաձայն հաշվարկված երկրին բնորոշ սահմանային դրույքաչափերը հանգեցնում են E ձեռագրված 0,158 կիլոգրամ քաշ ունեցող առաքանու համար հաշվարկված եկամտի, որն ավելի ցածր է ստորեւ նշված դրույքաչափերի հիման վրա նույն առաքանու համար հաշվարկված եկամտից, ապա ինքնահայտարարագրված դրույքաչափերը չեն կարող գերազանցել հետեւյալ դրույքաչափերը.

1.3.1 2020 թվականին՝ մեկ առաքանու համար 0.614 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.381 ՓՀԻ,

1.3.2 2021 թվականին՝ մեկ առաքանու համար 0.645 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.450 ՓՀԻ,

1.3.3 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.677 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.523 ՓՀԻ,

1.3.4 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.711 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.599 ՓՀԻ,

1.3.5 2024 թվականին՝ յուրաքանչյուր առաքանու համար 0.747 ՓՀԻ եւ յուրաքանչյուր կիլոգրամի համար 1.679 ՓՀԻ,

1.3.6 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.784 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.763 ՓՀԻ:

1.4 Ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող դրույքաչափերի ինքնահայտարարագրման մասով հավելյալ պայմանները եւ ընթացակարգերը սահմանվում են Կանոնակարգերով: Կանոնակարգերի՝ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների վերաբերյալ մյուս բոլոր դրույթները կիրառվում են ինքնահայտարարագրված դրույքաչափերի նկատմամբ՝ բացառությամբ, եթե դրանք չեն համապատասխանում սույն հոդվածին:

1.5 Անցումային համակարգում գտնվող երկրների նշանակված օպերատորները կարող են կիրառել ինքնահայտարարագրված դրույքաչափերը՝ հիմնվելով իրենց մուտքային հոսքերի նմուշի վրա:

2 Բացի 1.2 կետով նախատեսված սահմանային դրույքաչափերից՝ ծանուցվող ինքնահայտարարագրված դրույքաչափերը չեն կարող բարձր լինել 2021-2025 թվականների համար սահմանված առավելագույն եկամուտներից, հետեւյալ կերպ.

2.1 2021 թվական՝ ինքնահայտարարագրված դրույքաչափերի հիման վրա հաշվարկված եկամուտը պետք է սահմանվի երկրին հատուկ սահմանային դրույքաչափերից նվազագույնով, իսկ 2020 թվականին 0.158 կիլոգրամ քաշ ունեցող E ձեւաչափով առաքանու համար եկամուտն ավելացվի 15%-ով,

2.2 2022 թվական՝ ինքնահայտարարագրված դրույքաչափերի հիման վրա հաշվարկված եկամուտը պետք է սահմանվի երկրին հատուկ սահմանային դրույքաչափերից նվազագույնով, իսկ 2021 թվականին 0.158 կիլոգրամ քաշ ունեցող E ձեւաչափով առաքանու համար եկամուտն ավելացվի 15%-ով,

2.3 2023 թվական՝ ինքնահայտարարագրված դրույքաչափերի հիման վրա հաշվարկված եկամուտը պետք է սահմանվի երկրին հատուկ սահմանային դրույքաչափերից նվազագույնով, իսկ 2022 թվականին 0.158 կիլոգրամ քաշ ունեցող E ձեւաչափով առաքանու համար եկամուտն ավելացվի 16%-ով,

2.4 2024 թվական՝ ինքնահայտարարագրված դրույքաչափերի հիման վրա հաշվարկված եկամուտը պետք է սահմանվի երկրին հատուկ սահմանային դրույքաչափերից նվազագույնով, իսկ 2023 թվականին 0.158 կիլոգրամ քաշ ունեցող E ձեռքաչափով առաքանու համար եկամուտն ավելացվի 16%-ով,

2.5 2025 թվական՝ ինքնահայտարարագրված դրույքաչափերի հիման վրա հաշվարկված եկամուտը պետք է սահմանվի երկրին հատուկ սահմանային դրույքաչափերից նվազագույնով, իսկ 2024 թվականին 0.158 կիլոգրամ քաշ ունեցող E ձեռքաչափով առաքանու համար եկամուտն ավելացվի 17%-ով:

3 2021 թվականին եւ հետագա տարիներին գործող դրույքաչափերի համար ինքնահայտարարագրված առաքանու դրույքաչափի եւ կիլոգրամի դրույքաչափի հարաբերակցությունը չի կարող փոխվել ավելի քան հինգ տոկոսային կետով բարձր կամ ցածր՝ նախորդ տարվա հարաբերակցության համեմատ: Այն նշանակված օպերատորների համար, որոնք դրույքաչափեր են ինքնահայտարարագրում 7-րդ կետի համաձայն կամ կիրառում են ինքնահայտարարագրված դրույքաչափեր փոխադարձ հիմունքներով՝ համաձայն 9-րդ կետի, 2020 թվականին գործող հարաբերակցությունը հիմնված է մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի համար ինքնահայտարարագրված դրույքաչափերի վրա, որոնք սահմանվել են 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ:

4 Այն նշանակված օպերատորները, որոնք նախընտրում են չհայտարարագրել իրենց դրույքաչափերը սույն հոդվածի համաձայն, պետք է ամբողջությամբ կիրառեն 30-րդ եւ 31-րդ հոդվածներում ներառված դրույթները:

5 Այն նշանակված օպերատորների համար, որոնք նախորդ տարվա համար ինքնահայտարարագրել են իրենց ծավալուն (E) եւ փոքր (E) նամակագրական առաքանիների համար եւ հաջորդող տարվա համար չեն հայտնում ինքնահայտարարագրված տարբերվող դրույքաչափեր, ինքնահայտարարագրված գործող դրույքաչափերը շարունակում են կիրառվել՝ բացառությամբ, եթե դրանք դադարում են բավարարել սույն հոդվածով սահմանված պայմանները:

6 Համապատասխան նշանակված օպերատորը միջազգային բյուրոյին տեղեկացնում է սույն հոդվածում նշված ներպետական վճարի ցանկացած նվազեցման մասին:

7 Ուժի մեջ մտնելով 2020 թվականի հուլիսի 1-ից եւ չնայած 1-ին եւ 2-րդ կետերին՝ այն անդամ երկրի նշանակված օպերատորը, որը 2018 թվականին տարեկան կտրվածքով ստացել է 75,000 տոննա ծավալը գերազանցող գրավոր նամակագրություն հանդիսացող մուտքային առաքանիներ (ըստ Միջազգային բյուրոյին տրամադրված համապատասխան պաշտոնական տեղեկությունների կամ Միջազգային բյուրոյի կողմից գնահատված ցանկացած հասանելի տեղեկության) կարող է ինքնահայտարարագրել ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական

առաքանիների դրույքաչափերը՝ բացառությամբ 1.1.6 եւ 1.1.7 կետերում նշված գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների հոսքերի: Նշված նշանակված օպերատորն իրավունք ունի նաեւ չկիրառելու 2-րդ կետով սահմանված եկամտի ավելացման սահմանաչափերը փոստային հոսքերի համար, որոնք ուղղված են, ստացվել են իր երկրից կամ փոխանակվել են իր երկրի եւ ցանկացած այլ երկրի միջեւ:

8 Եթե նշանակված օպերատորի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինը, որն օգտվում է վերոնշյալ 7-րդ կետում նշված տարբերակից, որոշում է, որ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների մշակման եւ առաքման հետ կապված բոլոր ծախսերը հոգալու համար նշանակված օպերատորի ինքնահայտարարագրված դրույքաչափը 2020 թվականից հետո ցանկացած տարվա ընթացքում պետք է հիմնված լինի ներպետական շրջանակներում սահմանված մեկ կտորի դիմաց վճարվող վճարի 70%-ը գերազանցող ծախս-սակագին հարաբերակցության վրա, ապա այդ նշանակված օպերատորի համար ծախս-սակագին հարաբերակցությունը կարող է գերազանցել 70%-ը՝ պայմանով, որ կիրառման ենթակա ծախս-սակագին հարաբերակցությունը չի գերազանցում 70%-ից բարձր մեկ տոկոսային կետը, կամ ներկայումս գործող ինքնահայտարարագրված դրույքաչափերի հաշվարկում կիրառվող ծախս-սակագին հարաբերակցությունը չի գերազանցում 80%-ը, եւ պայմանով, որ տվյալ նշանակված օպերատորը տրամադրում է բոլոր նման օժանդակ տեղեկությունները՝ ծանուցելով Միջազգային բյուրոյին 1-ին կետի համաձայն: Եթե նշանակված որեւէ այդպիսի օպերատոր իրավասու մարմնի այդպիսի որոշման հիման վրա բարձրացնում է իր ծախս-սակագին հարաբերակցությունը, ապա այն հրապարակման նպատակով այդ հարաբերակցության մասին հայտնում է Միջազգային բյուրոյին մինչեւ այդ հարաբերակցության կիրառման տարվան նախորդող տարվա մայիսի 1-ը: Ծախսերի եւ եկամուտների հետ կապված լրացուցիչ բնութագրերը, որոնք պետք է օգտագործվեն հատուկ ծախս-սակագին հարաբերակցության հաշվարկի համար, պետք է նախատեսվեն Կանոնակարգերով:

9 Եթե որեւէ անդամ երկրի նշանակված օպերատոր վկայակոչում է 7-րդ կետը, ապա համապատասխան մյուս բոլոր նշանակված օպերատորները (այդ թվում նրանք, որոնց ազատված մեկնման հոսքերը նշված են 1.1.6 եւ 1.1.7 կետերում) կարող են վարվել նույն կերպ եւ վերոնշյալ նշանակված օպերատորի առնչությամբ ինքնահայտարարագրել ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների դրույքաչափերը՝ առանց 2-րդ կետով սահմանված եկամտի ավելացման սահմանաչափերի կիրառման: Սույն հոդվածի 8-րդ հոդվածը կիրառվում է նաեւ նշանակված համապատասխան բոլոր օպերատորների նկատմամբ: Ինչ վերաբերում է նշանակված ցանկացած նման համապատասխան օպերատորի, որը

որոշում է կիրառել սույն 9-րդ կետի համաձայն սահմանված ինքնահայտարարագրված դրույքաչափերը (ներառյալ նրանք, որոնց մեկնման հոսքերը կամընտիր կերպով ենթակա են ազատման՝ համաձայն 1.1.6 եւ 1.1.7 կետերի), ապա փոխադարձության սկզբունքով կիրառվում են 7-րդ կետը վկայակոչած նշանակված օպերատորի ինքնահայտարարագրված դրույքաչափերը:

10 Ցանկացած նշանակված օպերատոր, որը վկայակոչում է 7-րդ կետում նշված հնարավորությունը, նախնական դրույքաչափերն ուժի մեջ մտնելու օրացուցային տարվա ընթացքում հինգ հաջորդական տարի ժամկետով (սկսած վերոնշյալ 7-րդ կետում նշված տարբերակի կիրառման օրացուցային տարվանից) պետք է Միությանը վճարի տարեկան 8 միլիոն շվեյցարական ֆրանկ՝ ընդհանուր՝ 40 միլիոն շվեյցարական ֆրանկ: Հնգամյա ժամկետի ավարտից հետո սույն կետի համաձայն դրույքաչափերի ինքնահայտարարագրման համար այլ վճարումներ չեն նախատեսվում:

10.1 Վերոնշյալ վճարը բաշխվում է բացառապես համաձայն հետևյալ մեթոդաբանության. 16 միլիոն շվեյցարական ֆրանկը հատկացվում է Միության կապակցված ֆոնդին՝ էլեկտրոնային առաջնակարգ տվյալների համակարգի (EAD) եւ փոստային անվտանգությանն ուղղված նախագծերի իրականացման համար՝ համաձայն նշանակված օպերատորի եւ Միության մեջ կնքված համաձայնագրի պայմանների, իսկ 24 միլիոն շվեյցարական ֆրանկը հատկացվում է կապակցված ֆոնդին՝ Միության երկարաժամկետ պարտավորությունները ֆինանսավորելու նպատակներով, ինչպես սահմանվել է Կառավարման խորհրդի կողմից՝ նշված նշանակված օպերատորի եւ Միության միջեւ կնքված համաձայնագրի պայմանների համաձայն:

10.2 Սույն կետով սահմանված վճարը չի կիրառվում անդամ երկրների այն նշանակված օպերատորների նկատմամբ, որոնք 9-րդ կետի համաձայն փոխադարձության սկզբունքով կիրառում են ինքնահայտարարագրված դրույքաչափերը՝ մեկ այլ նշանակված օպերատորի կողմից 7-րդ կետի համաձայն ինքնահայտարարագրված դրույքաչափերի տարբերակից օգտվելու արդյունքում:

10.3 Վճարը կատարող նշանակված օպերատորը յուրաքանչյուր տարի տեղեկացնում է Միջազգային բյուրոյին, թե ինչպես պետք է հատկացվի տարեկան 8 միլիոն շվեյցարական ֆրանկը՝ պայմանով, որ տարեկան հինգ հատկացումները բաշխվեն վերոնշյալ կարգով՝ նշված համաձայնությանը համապատասխան: Նշանակված այն օպերատորին, որն օգտվում է 7-րդ կետի համաձայն ինքնահայտարարագրված դրույքաչափերի տարբերակից, տրամադրվում է սույն կետի համաձայն փոխանցված վճարների հետ կապված ծախսերի մասին պատշաճ հաշվետվություն՝ նշված նշանակված օպերատորի եւ Միության միջեւ կնքված համաձայնագրի պայմանների համաձայն:

11 Եթե նշանակված օպերատորն օգտվում է 7-րդ կետի համաձայն ինքնահայտարարագրելու տարբերակից, կամ եթե նշանակված օպերատորը փոխադարձաբար կիրառում է 9-րդ հոդվածի համաձայն ինքնահայտարարագրված դրույքաչափը, ապա ինքնահայտարարագրված դրույքաչափերի ներդրման հետ միաժամանակ նշված նշանակված օպերատորը պետք է դիտարկի Միության անդամ երկրների ուղարկող նշանակված օպերատորներին ոչ խտրական հիմունքներով ծավալի եւ հեռավորության մասով համամասնորեն ճշգրտված վճարները հասանելի դարձնելու հարցն այնքանով, որքանով դա իրագործելի է հասանելի է ընդունող երկրի՝ համանման ծառայությունների հրապարակված ներպետական ծառայության շրջանակներում՝ համաձայն փոխհամաձայնեցված երկկողմանի առևտրային համաձայնագրի, ազգային կարգավորող մարմնի կանոնների շրջանակներում:

12 Սույն հոդվածի մասով վերապահումներ չեն կարող արվել:

### **Հոդված 30**

**Վերջնական վճարները: Թիրախային համակարգի երկրների նշանակված օպերատորների միջեւ փոստային առաքումների հոսքերի նկատմամբ կիրառվող դրույթները**

1 Գրավոր նամակագրական առաքանիների, այդ թվում՝ ծավալուն փոստային առաքումների վճարումը, բացի M պարկերից եւ IBRS առաքանիներից, սահմանվում է մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի դրույքաչափերի կիրառման հիման վրա, որոնք արտացոլում են վերջնակետ երկրում մշակման ծախսերը: Ներպետական ծառայության շրջանակներում առաջնահերթ առաքանիներին համապատասխանող վճարները, որոնք համընդհանուր ծառայության մաս են կազմում, կօգտագործվեն որպես վերջնական վճարների դրույքաչափերի հաշվարկման հիմք:

2 Թիրախային համակարգում վերջնական վճարների դրույքաչափերը հաշվարկվում են՝ հաշվի առնելով, ըստ ներքին ծառայության շրջանակներում կիրառման անհրաժեշտության, առաքանիների դասակարգումն ըստ նրանց ձեւաչափի՝ Կոնվենցիայի 17.5 հոդվածով նախատեսված կարգով:

3 Թիրախային համակարգի նշանակված օպերատորները փոխանակում են ըստ ձեւաչափի տարանջատված փոստային առաքումներ՝ Կանոնակարգերով նշված պայմաններին համապատասխան:

4 IBRS առաքանիների դիմաց վճարումը կատարվում է Կանոնակարգերում նկարագրված կարգով:

5 Մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի համար սահմանված դրույքաչափերը տարանջատված են ըստ փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների եւ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական

առաքանիների: Դրանք հաշվարկվում են 20 գրամ քաշ ունեցող փոքր (P) գրավոր նամակագրական առաքանիների եւ 175 գրամ քաշ ունեցցող մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների վճարների 70%-ի հիման վրա՝ առանց ԱԱՀ-ի կամ այլ հարկերի: Ծավալուն (E) եւ փոքր փաթեթներով (E) գրավոր նամակագրական առաքանիների դեպքում դրանք հաշվարկվում են 375 գրամ P/G ձեւաչափի տողով՝ առանց ԱԱՀ-ի կամ այլ հարկերի:

6 Փոստային գործառնությունների խորհուրդը սահմանում է դրույքաչափերի հաշվարկման պայմանները, ինչպես նաեւ գործառնական, վիճակագրական եւ հաշվապահական անհրաժեշտ ընթացակարգերը՝ ըստ ձեւաչափի առանձնացված փոստային առաքումների փոխանակման համար:

7 Թիրախային համակարգի երկրների միջեւ տվյալ տարվա ընթացքում հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը չեն կարող հանգեցնել 37,6 գրամ P/G ձեւաչափով եւ 375 գրամ E ձեւաչափով գրավոր նամակագրական առաքանիների վերջնական ծախսերի գծով եկամուտի ավելի քան 13% ավելացման՝ նախորդ տարվա համեմատ:

8 Մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգում ներգրավված երկրների միջեւ հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների համար չեն կարող ավելի բարձր լինել, քան՝

8.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.380 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.966 ՓՀԻ,

8.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.399 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.114 ՓՀԻ,

8.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.419 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.270 ՓՀԻ,

8.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.440 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.434 ՓՀԻ:

9 Թիրախային համակարգում ներգրավված երկրների միջեւ հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը ծավալուն (E) եւ փոքր փաթեթներով (E) գրավոր նամակագրական առաքանիների համար չեն կարող ավելի բարձր լինել, քան՝

9.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.864 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.942 ՓՀԻ,

9.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.950 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.136 ՓՀԻ,

9.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 1.045 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.350 ՓՀԻ,

9.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 1.150 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.585 ՓՀԻ:

10 Թիրախային համակարգում ներգրավված երկրների միջև հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների համար չեն կարող ավելի ցածր լինել, քան՝

10.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.272 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.121 ՓՀԻ,

10.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.292 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.280 ՓՀԻ,

10.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.314 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.451 ՓՀԻ,

10.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.330 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.574 ՓՀԻ:

11 Թիրախային համակարգում ներգրավված երկրների միջև հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը ծավալուն (E) եւ փոքր փաթեթներով (E) գրավոր նամակագրական առաքանիների համար չեն կարող ավելի ցածր լինել, քան՝

11.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.677 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.523 ՓՀԻ,

11.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.711 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.599 ՓՀԻ,

11.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.747 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.679 ՓՀԻ,

11.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.784 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.763 ՓՀԻ:

12 2010 եւ 2012 թվականներից թիրախային համակարգում ներգրավված երկրների միջև հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը, ինչպես նաեւ մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգում ներգրավված այս երկրների միջև փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների մասով կիրառվող դրույքաչափերը չեն կարող լինել ավելի բարձր, քան՝

12.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.342 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.672 ՓՀԻ,

12.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.372 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.905 ՓՀԻ,

12.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.404 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.158 ՓՀԻ,

12.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.440 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.434 ՓՀԻ:

13 2016 թվականից թիրախային համակարգում ներգրավված երկրների միջև հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը, ինչպես նաեւ մինչեւ 2010 թվականը կամ



2010 եւ 2012 թվականներից թիրախային համակարգում ներգրավված այս երկրների միջեւ փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների մասով կիրառվող դրույքաչափերը չեն կարող լինել ավելի բարձր, քան՝

13.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.313 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.443 ՓՀԻ,

13.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.351 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.738 ՓՀԻ,

13.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.393 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.068 ՓՀԻ,

13.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.440 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.434 ՓՀԻ:

14 2010, 2012 եւ 2016 թվականներին թիրախային համակարգին միացած երկրների միջեւ, ինչպես նաեւ այս երկրների եւ մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգին միացած երկրների միջեւ մեկ տարվա ընթացքում 50 տոննա քաշից ցածր քաշ ունեցող հոսքերի դեպքում մեկ կիլոգրամի եւ մեկ առաքանու բաղադրիչները փոխարկվում են մեկ կիլոգրամի համար ընդհանուր դրույքաչափի փոստային առաքումների մեկ կիլոգրամի համաշխարհային միջին կազմի հիման վրա, որտեղ P եւ G ձեւաչափով առաքանիները համարվում են 0.14 կիլոգրամ կշռող 3.97 միավոր առաքանիներ, իսկ E ձեւաչափով առաքանիները համարվում են 0.86 կիլոգրամ կշռող 5.45 միավոր առաքանիներ:

15 Սույն հոդվածում նշված ծավալուն (E) եւ փոքր փաթեթներով (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով դրույքաչափերը փոխարինվում են ծավալուն (E) եւ փոքր փաթեթներով (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող վերջնական վճարների դրույքաչափերով, որոնք ինքնահայտարարագրվել են համաձայն 29-րդ հոդվածի, հետեւաբար 7-րդ, 9-րդ, 11-րդ կետերում սահմանված դրույթները չեն կիրառվում:

16 Մինչեւ 2010 թվականը թիրախային համակարգում ներգրավված երկրներին ուղարկված ծավալուն փոստային առաքումների դիմաց վճարումը սահմանվում է՝ կիրառելով մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի մասով դրույքաչափեր, որոնք, ըստ անհրաժեշտության, նախատեսված են 5-11 կետերով կամ 29-րդ հոդվածով:

17 2010, 2012 եւ 2016 թվականներից թիրախային համակարգում ներգրավված երկրներին ուղարկված ծավալուն փոստային առաքումների դիմաց վճարումը սահմանվում է՝ կիրառելով մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի մասով դրույքաչափեր, որոնք, ըստ անհրաժեշտության, նախատեսված են 5-րդ կետով եւ 10-13 կետերով կամ 29-րդ հոդվածով:

18 Սույն հոդվածի մասով վերապահումներ չեն կարող արվել:

**Հոդված 31**

**Վերջնական վճարները: Անցումային համակարգի երկրների նշանակված օպերատորներին ուղղված, նրանցից ուղարկված կամ նրանց միջեւ փոստային առաքումների հոսքերի նկատմամբ կիրառվող դրույթները**

1 Վերջնական վճարների անցումային համակարգում ներգրավված երկրների նշանակված օպերատորների՝ թիրախային համակարգ մուտք գործելու համար պատրաստվելիս գրավոր նամակագրական առաքանիների, այդ թվում՝ ծավալուն փոստային առաքումների դիմաց վճարումը, բացառությամբ M պարկերի եւ IBRS առաքանիների, սահմանվում են մեկ առաքանու դրույքաչափի եւ մեկ կիլոգրամի դրույքաչափի հիման վրա:

2 Բացառությամբ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող, 29-րդ հոդվածի համաձայն ինքնահայտարարագրված վերջնական վճարների մասով դրույքաչափերի՝ 30-րդ հոդվածի դրույթները, 1-3 կետերը, 9-րդ եւ 10-րդ կետերը կիրառվում են փոքր (P), մեծ (G), ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի դրույքաչափերը հաշվելու համար:

3 Անցումային համակարգի երկրներին ուղարկված, նրանցից ստացված կամ նրանց միջեւ ուղարկված տվյալ տարվա ընթացքում հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը չեն կարող հանգեցնել 37,6 գրամ P/G ձեւաչափով գրավոր նամակագրական առաքանիների վերջնական ծախսերի եկամուտների ավելի քան 15.5% ավելացման, իսկ 375 գրամ E ձեւաչափով գրավոր նամակագրական առաքանիների վերջնական ծախսերի եկամուտների ավելի քան 13% ավելացման՝ նախորդ տարվա համեմատ:

4 IBRS առաքանիների դիմաց վճարումը կատարվում է Կանոնակարգերում սահմանված կարգով:

5 Թիրախային համակարգում ներգրավված երկրներին ուղղված, նրանցից ստացված եւ նրանց միջեւ հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների համար չեն կարող ավելի բարձր լինել, քան՝

5.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.285 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.227 ՓՀԻ,

5.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.329 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.573 ՓՀԻ,

5.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.380 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.973 ՓՀԻ,

5.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.440 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 3.434 ՓՀԻ:

6 Թիրախային համակարգում ներգրավված երկրներին ուղղված, նրանցից ստացված եւ նրանց միջեւ հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը փոքր (P) եւ մեծ (G) գրավոր նամակագրական առաքանիների համար չեն կարող ավելի ցածր լինել, քան՝

6.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.272 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.121 ՓՀԻ,

6.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.292 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.280 ՓՀԻ,

6.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.314 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.451 ՓՀԻ,

6.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.330 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.574 ՓՀԻ:

7 Բացառությամբ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող, 29-րդ հոդվածի եւ վերոնշյալ 2-րդ կետի համաձայն ինքնահայտարարագրված վերջնական վճարների մասով դրույքաչափերի՝ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով անցումային համակարգի երկրներին ուղարկված, նրանցից ստացված եւ նրանց միջեւ ուղարկվող հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը չեն կարող լինել ավելի բարձր, քան՝

7.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.864 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.942 ՓՀԻ,

7.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.950 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.136 ՓՀԻ,

7.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 1.045 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.350 ՓՀԻ,

7.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 1.150 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 2.585 ՓՀԻ:

8 Բացառությամբ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող, 29-րդ հոդվածի եւ վերոնշյալ 2-րդ կետի համաձայն ինքնահայտարարագրված վերջնական վճարների մասով դրույքաչափերի՝ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով անցումային համակարգի երկրներին ուղարկված, նրանցից ստացված եւ նրանց միջեւ ուղարկվող հոսքերի մասով կիրառվող դրույքաչափերը չեն կարող լինել ավելի ցածր, քան՝

8.1 2022 թվականին՝ մեկ առաքանու համար 0.677 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի

համար 1.523 ՓՀԻ,

8.2 2023 թվականին՝ մեկ առաքանու համար 0.711 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.599 ՓՀԻ,

8.3 2024 թվականին՝ մեկ առաքանու համար 0.747 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.679 ՓՀԻ,

8.4 2025 թվականին՝ մեկ առաքանու համար 0.784 ՓՀԻ եւ մեկ կիլոգրամի համար 1.763 ՓՀԻ:

9 Բացառությամբ 29-րդ հոդվածի համաձայն ինքնահայտարարագրված ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող վերջնական վճարների մասով դրույքաչափերի՝ ըստ մեկ կիլոգրամի եւ մեկ առաքանու բաղադրիչները փոխարկվում են մեկ կիլոգրամի համար ընդհանուր դրույքաչափի՝ փոստային առաքումների մեկ կիլոգրամի համաշխարհային միջին կազմի հիման վրա՝ հետեւյալ կերպ.

9.1 2022 թվականին՝ մեկ կիլոգրամի համար ոչ պակաս, քան 6.376 ՓՀԻ, եւ մեկ կիլոգրամի համար ոչ բարձր, քան 7.822 ՓՀԻ,

9.2 2023 թվականին՝ մեկ կիլոգրամի համար ոչ պակաս, քան 6.729 ՓՀԻ, եւ մեկ կիլոգրամի համար ոչ բարձր, քան 8.681 ՓՀԻ,

9.3 2024 թվականին՝ մեկ կիլոգրամի համար ոչ պակաս, քան 7.105 ՓՀԻ, եւ մեկ կիլոգրամի համար ոչ բարձր, քան 9.641 ՓՀԻ,

9.4 2025 թվականին՝ մեկ կիլոգրամի համար ոչ պակաս քան 7.459 ՓՀԻ, եւ մեկ կիլոգրամի համար ոչ բարձր, քան 10.718 ՓՀԻ:

10 Բացառությամբ 29-րդ հոդվածի համաձայն ինքնահայտարարագրված ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող վերջնական վճարների մասով դրույքաչափերի՝ մեկ կիլոգրամի համամասնական դրույքաչափը կիրառվում է, եթե ծագման երկրի նշանակված օպերատորը կամ վերջնակետ երկրի նշանակված օպերատորը չեն պահանջում վերանայման մեխանիզմ՝ մեկ կիլոգրամի հաշվով առաքանիների փաստացի թվի, այլ ոչ թե համաշխարհային միջինի հիման վրա դրույքաչափը վերանայելու նպատակով: Վերանայման մեխանիզմի համար իրականացվող նմուշը կիրառվում է Կանոնակարգերով սահմանված պայմաններին համապատասխան:

11 Անցումային համակարգում ներգրավված երկրներից ստացվող եւ նրանց միջեւ տարեկան 100 տոննա քաշից ցածր քաշ ունեցող հոսքերի դեպքում, մեկ կիլոգրամի համար ընդհանուր դրույքաչափն արտահայտվում է հետեւյալ կերպ.

11.1 2022 թվականին՝ մեկ կիլոգրամը 6.376 ՓՀԻ,

11.2 2023 թվականին՝ մեկ կիլոգրամը 6.729 ՓՀԻ,

11.3 2024 թվականին՝ մեկ կիլոգրամը 7.105 ՓՀԻ,

11.4 2025 թվականին՝ մեկ կիլոգրամը 7.459 ՓՀԻ:

12 Թիրախային համակարգի երկրներից անցումային համակարգի երկրներին ուղարկվող տարեկան 100 տոննա քաշից ցածր քաշ ունեցող փոստային հոսքերի դեպքում, եթե ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող վերջնական վճարների դրույքաչափերը ինքնահայտարարագրվել են համաձայն 29-րդ հոդվածի, մեկ կիլոգրամի եւ մեկ առաքանու բաղադրիչները փոխարկվում են մեկ կիլոգրամի համար ընդհանուր դրույքաչափի՝ փոստային առաքումների մեկ կիլոգրամի համաշխարհային միջին կազմի հիման վրա, ինչպես նշված է 30.14 հոդվածում՝ բացառությամբ 29.1.5 հոդվածում նշված 50 տոննա եւ ավելին կազմող հոսքերի դեպքերի, երբ անցումային համակարգի երկիրը իրականացնում է մուտքային հոսքի նմուշառում:

13 Անցումային համակարգի երկրներին ուղարկված, նրանցից ստացված եւ նրանց միջեւ ուղարկվող փոստային առաքումների տարեկան 100 տոննա քաշից ցածր քաշ ունեցող հոսքերի դեպքում, եթե ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների նկատմամբ կիրառվող վերջնական վճարների դրույքաչափերը ինքնահայտարարագրվել են համաձայն 29-րդ հոդվածի, եւ եթե վերջնակետ երկիրը որոշում է չիրականացնել մուտքային հոսքի նմուշառում, ապա մեկ կիլոգրամի եւ մեկ առաքանու բաղադրիչները փոխարկվում են մեկ կիլոգրամի համար ընդհանուր դրույքաչափի՝ փոստային առաքումների մեկ կիլոգրամի համաշխարհային միջին կազմի հիման վրա, ինչպես նշված է 30.14 հոդվածում:

14 Բացառությամբ 12-րդ կետում նկարագրված փոստային առաքումների հոսքերի՝ ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական այն առաքանիների նկատմամբ կիրառվող վերջնական վճարների դրույքաչափերը, որոնք ինքնահայտարարագրվել են համաձայն 29-րդ հոդվածի, փոխարինում են սույն հոդվածում նշված ծավալուն (E) եւ փոքր (E) գրավոր նամակագրական առաքանիների մասով դրույքաչափերին, հետեւաբար 7-րդ, 8-րդ, 10-րդ կետերում սահմանված դրույթները չեն կիրառվում:

15 Տասներորդ կետում նշված ընդհանուր դրույքաչափի վարընթաց վերանայումը (իջեցումը) չի կարող կիրառվել թիրախային համակարգում գտնվող երկրի կողմից անցումային համակարգում գտնվող երկրի դեմ, եթե վերջինս չի խնդրում իրականացնել հակառակ ուղղությամբ վերանայում:

16 Անցումային համակարգի երկրին ուղարկված, նրանցից ստացված եւ նրանց միջեւ ուղարկվող հոսքերի դեպքում, որոնք չեն գերազանցում տարեկան 100 տոննան, նշանակված օպերատորները կարող են ուղարկել եւ ստանալ ըստ ձեւաչափի տարանջատված փոստային առաքումներ կամ ընտրական սկզբունքով՝ համաձայն Կանոնակարգերով սահմանված պայմանների: Ըստ ձեւաչափի տարանջատված փոխանակումների դեպքում վերոնշյալ 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերում նշված դրույքաչափերը կիրառվում են, եթե վերջնակետ երկրի նշանակված

օպերատորը նախընտրում է չինքնահայտարարագրել դրույքաչափերը համաձայն 29-րդ հոդվածի:

17 Թիրախային համակարգի երկրների նշանակված օպերատորներին ծավալուն փոստային առաքումների դիմաց կատարվող վճարումը սահմանվում է՝ կիրառելով մեկ առաքանու եւ մեկ կիլոգրամի մասով դրույքաչափերը, որոնք նախատեսված են 29-րդ կամ 30-րդ հոդվածով: Ստացվող ծավալուն փոստային առաքումների դեպքում անցումային համակարգի նշանակված օպերատորները կարող են անհրաժեշտության դեպքում պահանջել վճարում՝ համաձայն վերոնշյալ 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերի եւ 29-րդ հոդվածի:

18 Սույն հոդվածի մասով վերապահումներ չեն կարող արվել:

### **Հոդված 32**

#### **Ծառայությունների ֆոնդի որակը**

1 Բոլոր երկրների եւ տարածքների կողմից որպես ամենաքիչ զարգացած երկրներ դասակարգված եւ վերջնական վճարների վճարման եւ Ծառայությունների ֆոնդի որակի (ԾՖՈ) նպատակներով IV խմբում ներառված երկրներին վճարման ենթակա վերջնական վճարները, բացառությամբ M պարկերի, IBRS առաքանիների եւ ծավալուն փոստային առաքումների առաքանիների վճարների, ավելացվում են 29-րդ կամ 31-րդ հոդվածով նախատեսված դրույքաչափերի 20%-ով՝ ԾՖՈ-ի օգտին կատարվող վճարման նպատակներով՝ այդ երկրներում ծառայության որակը բարելավելու համար: Որեւէ այդպիսի վճարում չպետք է լինի IV խմբի մի երկրից IV խմբի մյուս երկրին:

2 Վերջնական վճարները, բացառությամբ M պարկերի, IBRS առաքանիների եւ ծավալուն փոստային առաքանիների մասով վճարների, որոնք պետք է վճարվեն որպես I խմբի երկրներ դասակարգված երկրների եւ տարածքների կողմից որպես IV խմբի երկրներ դասակարգված երկրներին, որոնք սույն հոդվածի 1-ին կետում նշված ամենաքիչ զարգացած երկրները չեն, ավելացվում են 29-րդ կամ 31-րդ հոդվածով նախատեսված դրույքաչափերի 10%-ով՝ ԾՖՈ-ի օգտին կատարվող վճարման նպատակով՝ այդ երկրներում ծառայության որակը բարելավելու համար:

3 Վերջնական վճարները, բացառությամբ M պարկերի, IBRS առաքանիների եւ ծավալուն փոստային առաքանիների մասով վճարների, որոնք պետք է վճարվեն որպես II խմբի երկրներ դասակարգված երկրների եւ տարածքների կողմից որպես IV խմբի երկրներ դասակարգված երկրներին, որոնք չեն համարվում սույն հոդվածի 1-ին կետում նշված ամենաքիչ զարգացած երկրներից, ավելացվում են 29-րդ կամ 31-րդ հոդվածով նախատեսված դրույքաչափերի 10%-ով՝ ԾՖՈ-ի օգտին կատարվող վճարման նպատակով՝ այդ երկրներում ծառայության որակը բարելավելու համար:

4 Վերջնական վճարները, բացառությամբ M պարկերի, IBRS առաքանիների եւ ծավալուն փոստային առաքումների առաքանիների մասով վճարների, որոնք պետք է վճարվեն որպես III խմբի երկրներ դասակարգված երկրների եւ տարածքների կողմից որպես III խմբի երկրներ դասակարգված երկրներին, որոնք սույն հոդվածի 1-ին կետում նշված ամենաքիչ զարգացած երկրները չեն, ավելացվում են 29-րդ կամ 31-րդ հոդվածով նախատեսված դրույքաչափերի 5%-ով՝ ԾՖՈ-ի օգտին կատարվող վճարման նպատակներով՝ այդ երկրներում ծառայության որակը բարելավելու համար:

5 1%-ի ավելացումը, որը հաշվարկվում է որպես I, II եւ III խմբերի երկրներ դասակարգված երկրների եւ տարածքների կողմից որպես III խմբի երկրներ դասակարգված երկրներին վճարման ենթակա վերջնական վճարների հիման վրա՝ բացառությամբ M պարկերի, IBRS առաքանիների եւ ծավալուն փոստային առաքանիների վճարների, վճարվում են ընդհանուր ֆոնդին, որը ստեղծվելու է որպես II, III եւ IV խմբեր դասակարգված երկրներում ծառայության որակը բարելավելու համար եւ կառավարվում է Փոստային գործառնությունների խորհրդի կողմից սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն:

6 0.5%-ի ավելացումը, որը հաշվարկվում է որպես I, II եւ III խմբերի երկրներ դասակարգված երկրների եւ տարածքների կողմից որպես III խմբի երկրներ դասակարգված երկրներին վճարման ենթակա վերջնական վճարների հիման վրա՝ բացառությամբ M պարկերի, IBRS առաքանիների եւ ծավալուն փոստային առաքանիների վճարների, վճարվում է հատուկ հաշվին, որը ստեղծվելու է որպես 5-րդ կետում նշված ընդհանուր ֆոնդի մաս՝ հատուկ IV խմբի երկրներում ծառայության որակը բարելավելու նպատակով, որոնք Միավորված ազգերի կազմակերպության կողմից դասակարգված են որպես ամենաքիչ զարգացած երկրներ, եւ կառավարվում է Փոստային գործառնությունների խորհրդի կողմից սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն:

7 Փոստային գործառնությունների խորհրդի կողմից սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն ներդրված չօգտագործված ցանկացած գումար, որը կուտակվել է ԾՖՈ-ի նախորդ չորս հաշվետու տարիների ընթացքում (2018 թվականը դիտարկելով որպես ամենավաղ հաշվետու տարի), նույնպես պետք է փոխանցվի սույն հոդվածի 5-րդ կետում նշված ընդհանուր ֆոնդին: Սույն կետի նպատակներով վերոնշյալ ընդհանուր ֆոնդին փոխանցվում են միայն այն միջոցները, որոնք վերելում սահմանված կարգով վերոնշյալ ցանկացած չորս տարի ժամկետի համար ներդրված գումարների վերջին վճարումն ստանալուց հետո երկու տարվա ընթացքում չեն օգտագործվել ԾՖՈ-ի կողմից հաստատված ծառայության որակի մասով նախագծերում:

8 IV խմբի երկրների ծառայությունների որակը բարելավելու նպատակով

ԾՖՈ-ի օգտին վճարման ենթակա համակցված վերջնական վճարները յուրաքանչյուր շահառու երկրի համար տարեկան կազմում են նվազագույնը 20,000 ՓՀԻ: Սույն նվազագույն գումարի չափին հասնելու համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցների հաշիվ-վավերագիրը, փոխանակված ծավալներին համաչափ, ուղարկվում է I, II եւ III խմբերի երկրներին:

9 Փոստային գործառնությունների խորհուրդն ամենաուշը մինչեւ 2021 թվականի դեկտեմբեր ամիսն ընդունում կամ թարմացնում է ԾՖՈ-ի նախագծերի ֆինանսավորման ընթացակարգերը:

Գ. Ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների դրույքաչափերը

### **Հոդված 33**

#### **Ծանրոց հանդիսացող փոստային առաքանիների ցամաքային եւ ծովային դրույքաչափերը**

1 Բացառությամբ ECOMPRO ծանրոցների՝ նշանակված երկու օպերատորների միջեւ փոխանակվող ծանրոցները ենթակա են ներքին ցամաքային դրույքաչափերի, որոնք հաշվարկվում են՝ միավորելով Կանոնակարգերով սահմանված մեկ ծանրոցի հիմնական դրույքաչափը եւ մեկ կիլոգրամի հիմնական դրույքաչափը:

1.1 Հաշվի առնելով վերոգրյալ հիմնական դրույքաչափերը՝ նշանակված օպերատորները կարող են նաեւ իրավունք ունենալ լրացուցիչ դրույքաչափեր պահանջելու մեկ ծանրոցի եւ մեկ կիլոգրամի համար՝ Կանոնակարգերով սահմանված դրույթներին համապատասխան:

1.2 1 եւ 1.1 կետերում նշված դրույքաչափերը ենթակա են վճարման ծագման երկրի նշանակված օպերատորի կողմից՝ բացառությամբ, եթե Կանոնակարգերն այս սկզբունքի մասով նախատեսում են բացառություններ:

1.3 Ներքին ցամաքային դրույքաչափերը միատեսակ են յուրաքանչյուր երկրի ամբողջ տարածքի համար:

2 Երկու նշանակված օպերատորների կամ նույն երկրի երկու գրասենյակների միջեւ մեկ կամ մի քանի այլ նշանակված օպերատորների ցամաքային ծառայության միջոցով փոխանակված ծանրոցների նկատմամբ կիրառվում են տարանցման ցամաքային դրույքաչափեր, որոնք պետք է վճարվեն այն նշանակված օպերատորներին, որոնք մասնակցում են Կանոնակարգերով սահմանված ցամաքային փոխադրմանը՝ ըստ կիրառելի հեռավորության քայլի:

2.1 Բաց տարանցման մեջ գտնվող ծանրոցների դեպքում նշանակված միջանկյալ օպերատորներն իրավունք ունեն պահանջելու Կանոնակարգերով



սահմանված՝ յուրաքանչյուր ապրանքի համար մեկ դրույքաչափ:

2.2 Տարանցման ցամաքային դրույքաչափերը ենթակա են վճարման ծագման երկրի նշանակված օպերատորի կողմից, եթե Կանոնակարգերն այս սկզբունքի մասով բացառություններ չեն նախատեսում:

3 Ծանրոցների ծովային փոխադրմանը մասնակցող ցանկացած նշանակված օպերատոր իրավունք ունի ծովային դրույքաչափեր պահանջելու: Այս դրույքաչափերը ենթակա են վճարման ծագման երկրի նշանակված օպերատորի կողմից, եթե Կանոնակարգերն այս սկզբունքի մասով բացառություններ չեն նախատեսում:

3.1 Օգտագործված յուրաքանչյուր ծովային փոխադրման դեպքում ծովային դրույքաչափը սահմանվում է Կանոնակարգերով՝ համաձայն կիրառելի հեռավորության չափի:

3.2 Նշանակված օպերատորները կարող են 3.1 կետին համապատասխան հաշվարկված ծովային դրույքաչափը ավելացնել առավելագույնը 50%-ով: Մյուս կողմից՝ նրանք կարող են ցանկության դեպքում այն նվազեցնել:

Դ. Օդային փոխադրման վճարները

#### **Հոդված 34**

#### **Օդային փոխադրումների վճարների վերաբերյալ հիմնական դրույքաչափերը եւ դրույթները**

1 Օդային փոխադրման մասով նշանակված օպերատորների միջեւ հաշիվների վճարման նկատմամբ կիրառվող հիմնական դրույքաչափը հաստատվում է Փոստային գործառնությունների խորհրդի կողմից եւ հաշվարկվում է Միջազգային բյուրոյի կողմից՝ համաձայն Կանոնակարգերով սահմանված բանաձեւի: Ապրանքների վերադարձման ծառայության միջոցով ուղարկված ծանրոցների օդային փոխադրման նկատմամբ կիրառվող դրույքաչափերը հաշվարկվում են Կանոնակարգերով սահմանված դրույթներին համապատասխան:

2 Փակ առաքումների, առաջնահերթ առաքանիների, ավիափոստի առաքանիների եւ բաց տարանցմամբ ուղարկվող օդային ծանրոցների, սխալ հասցեագրված առաքանիների եւ սխալ առաքված փոստային առաքումների մասով օդային փոխադրման վճարների հաշվարկը, ինչպես նաեւ հաշվառման համապատասխան մեթոդները նկարագրված են Կանոնակարգերում:

3 Թռիչքի ամբողջ տարածության համար օդային փոխադրման վճարները վճարվում են՝

3.1 փոստային առաքումների ծագման երկրի նշանակված օպերատորի կողմից փոստային փակ առաքումների դեպքում, այդ թվում, երբ այդ փոստային

առաքումները տարանցվում են նշանակված միջանկյալ մեկ կամ մի քանի օպերատորների միջոցով,

3.2 Առաջնահերթ առաքանիների եւ բաց տարանցման մեջ գտնվող ավիափոստային առաքանիների, այդ թվում՝ սխալ հասցեագրված առաքանիների դեպքում այն նշանակված օպերատորի կողմից, որն առաքանիներն ուղարկում է նշանակված մեկ այլ օպերատորի:

4 Այս նույն կարգավորումները կիրառվում են ցամաքային եւ ծովային տարանցման վճարներից ազատված առաքանիների նկատմամբ, եթե դրանք փոխադրվում են օդային ճանապարհով:

5 Վերջնակետ երկրի յուրաքանչյուր նշանակված օպերատոր, որն իր երկրի տարածքում իրականացնում է միջազգային փոստային առաքումների օդային փոխադրում, իրավունք ունի ստանալու նման փոխադրման համար կրած լրացուցիչ ծախսերի փոխհատուցում՝ պայմանով, որ փոխադրված հատվածների կշռված միջին հեռավորությունը գերազանցի 300 կիլոմետրը: Փոստային գործառնությունների խորհուրդը կարող է փոխարինել կշռված միջին հեռավորությունը համապատասխան այլ չափորոշիչներով: Եթե համաձայնություն ձեռք չի բերվել առ այն, որ որեւէ վճար չպետք է գանձվի, ապա վճարները պետք է արտերկրից ծագող առաջնահերթ բոլոր փոստային առաքումների եւ ավիափոստային առաքումների համար լինեն միատեսակ՝ անկախ նրանից, թե այդ փոստային առաքումը վերաուղարկվում է օդային ճանապարհով, թե՛ ոչ:

6 Այնուամենայնիվ, եթե վերջնակետ երկրի նշանակված օպերատորի կողմից գանձվող վերջնական վճարները հիմնված են կոնկրետ 29-րդ հոդվածի համաձայն սահմանված ծախսերի, ներպետական դրույքաչափերի կամ ինքնահայտարարագրված դրույքաչափերի վրա, ապա ներքին օդային փոխադրման համար լրացուցիչ փոխհատուցում չի կատարվում:

7 Վերջնակետ երկրի նշանակված օպերատորը կշռված միջին հեռավորությունը հաշվելու նպատակով հանում է փոստային բոլոր այն առաքանիների քաշը, որոնց համար վերջնական վճարների հաշվարկը կոնկրետ հիմնված է եղել վերջնակետ երկրի նշանակված օպերատորի ծախսերի, ներպետական դրույքաչափերի կամ 29-րդ հոդվածով սահմանված ինքնահայտարարագրված դրույքաչափերի հիման վրա:

Ե. Հաշիվների վճարումը

**Հոդված 35****Հաշիվների վճարման եւ միջազգային փոստային փոխանակումների դիմաց վճարումների վերաբերյալ դրույթները**

1 Սույն Կոնվենցիայի համաձայն կատարված գործառնությունների մասով հաշիվները եւ վճարումները (այդ թվում՝ փոստային առաքանիների փոխադրման (ուղարկման) մասով հաշիվները եւ վճարումները, վերջնակետ երկրում փոստային առաքանիների հետ վարվելու կարգի մասով հաշիվները եւ վճարումները եւ փոստային առաքանիների կորստի, գողության կամ հասցված վնասի մասով որպես փոխհատուցում վճարվող հաշիվները եւ վճարումները) հիմնվում եւ կատարվում են Կոնվենցիայի դրույթներին եւ Միության այլ ակտերի համապատասխան, ինչպես նաեւ չեն պահանջում նշանակված որեւէ օպերատորի կողմից փաստաթղթերի պատրաստում՝ բացառությամբ Միության ակտերով նախատեսված դեպքերի:

2 Նշանակված օպերատորները 3-րդ հոդվածում սահմանված կարգով համաշխարհային փոստային ծառայության տրամադրումը, ինչպես նաեւ միջազգային փոստային ցանցի ամբողջականությունն ապահովելու նպատակով վճարումներ են կատարում Կոնվենցիայի համաձայն իրականացված գործունեության համար:

2. Վճարները եւ դրույքաչափերը սահմանելը

**Հոդված 36****Փոստային գործառնությունների խորհրդի՝ վճարները եւ դրույքաչափերը սահմանելու լիազորությունը**

1 Փոստային գործառնությունների խորհուրդն ունի հետեւյալ դրույքաչափերը եւ վճարները սահմանելու լիազորություն, որոնք պետք է վճարվեն նշանակված օպերատորների կողմից՝ համաձայն Կանոնակարգերով նախատեսված պայմանների.

1.1 մեկ կամ մի քանի միջնորդ երկրների միջոցով նամակագրական փոստային առաքումների մշակման եւ փոխադրման տարանցման վճարներ,

1.2 օդային ճանապարհով փոխադրվող փոստային առաքումների փոխադրման հիմնական դրույքաչափեր եւ օդային փոխադրման վճարներ,

1.3 ներքին ցամաքային դրույքաչափեր՝ ներքին ճանապարհով փոխանցված բոլոր ծանրոցների մշակման համար՝ բացառությամբ ECOMPRO ծանրոցների,

1.4 տարանցման ցամաքային դրույքաչափեր՝ ծանրոցների մշակման եւ միջնորդ երկրի միջոցով փոխադրման համար,

1.5 ծովային դրույքաչափեր՝ ծովային ճանապարհով ծանրոցների փոխադրման համար,

1.6 արտաքին ցամաքային դրույքաչափեր՝ ծանրոցների մասով առևտրային ապրանքների վերադարձի ծառայության տրամադրման համար:

2 Ցանկացած վերանայում, որը կատարվել է ծառայությունները մատուցող նշանակված օպերատորների արդարացի վարձատրությունն ապահովող մեթոդաբանության համաձայն, պետք է հիմնված լինի հուսալի եւ ներկայացուցչական տնտեսական եւ ֆինանսական տվյալների վրա: Որոշված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում Փոստային գործառնությունների խորհրդի կողմից սահմանված օրը:

## **Բաժին VIII**

### **Կանոնտիր ծառայությունները**

#### **Հոդված 37**

##### **ԱՓԾ-ն եւ համալիր լոգիստիկան**

1 Անդամ երկրները կամ նշանակված օպերատորները կարող են միմյանց հետ պայմանավորվել Կանոնակարգերում նկարագրված հետեւյալ ծառայությունները մատուցելու հարցում.

1.1 ԱՓԾ, որը փաստաթղթերի եւ ապրանքների փոստային էքսպրես ծառայություն է եւ հնարավորության դեպքում պետք է լինի ֆիզիկական միջոցներով իրականացվող ամենաարագ փոստային ծառայությունը: Այս ծառայությունը կարող է մատուցվել ԱՓԾ-ի վերաբերյալ տիպային բազմակողմ համաձայնագրի կամ երկկողմ համաձայնության հիման վրա,

1.2 լոգիստիկայի համալիր ծառայություն, որը հաճախորդների լոգիստիկ պահանջներին լիովին արձագանքող ծառայություն է եւ ներառում է ապրանքների ու փաստաթղթերի ֆիզիկական փոխանցումից առաջ եւ հետո առկա փուլերը:

#### **Հոդված 38**

##### **Էլեկտրոնային փոստային ծառայությունները**

1 Անդամ երկրները կամ նշանակված օպերատորները կարող են միմյանց հետ պայմանավորվել Կանոնակարգերում նկարագրված հետեւյալ փոստային էլեկտրոնային ծառայությունները մատուցելու հարցում՝

1.1 էլեկտրոնային փոստ՝ էլեկտրոնային փոստային ծառայություն, որը ներառում է նշանակված օպերատորների կողմից էլեկտրոնային հաղորդագրությունների եւ տեղեկությունների փոխանցումը,

1.2 պատվիրված էլեկտրոնային փոստ՝ փոստային էլեկտրոնային ապահով ծառայություն՝ էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման եւ առաքման մասին

հաստատմամբ, ինչպես նաև ինքնությունը հաստատված օգտվողների հետ ապահով կապի ձեւ,

1.3 էլեկտրոնային փոստային սերտիֆիկացման կնիք, որը տրամադրում է էլեկտրոնային գործողության մասին ապացուցողական բնույթ ունեցող փաստ՝ կոնկրետ ձեւով, կոնկրետ պահին եւ մեկ կամ մի քանի կողմերի մասնակցությամբ,

1.4 էլեկտրոնային փոստարկղ, որը հնարավորություն է տալիս ինքնությունը հաստատված ուղարկողի միջոցով ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություններ, ինչպես նաև ինքնությունը հաստատված հասցեատերերի համար առաքել եւ պահպանել էլեկտրոնային հաղորդագրություններ եւ տեղեկություններ:

## **Բաժին IX**

### **Եզրափակիչ դրույթներ**

#### **Հոդված 39**

### **Կոնվենցիայի եւ Կանոնակարգերի վերաբերյալ առաջարկությունների հաստատման պայմանները**

1 Ուժի մեջ մտնելու համար Համագումար ներկայացված՝ սույն Կոնվենցիային վերաբերող առաջարկությունները պետք է հաստատվեն ներկա գտնվող եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների մեծամասնության կողմից: Համագումարում ներկայացված եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն կեսը պետք է ներկա գտնվի քվեարկությանը:

2 Ուժի մեջ մտնելու համար Կանոնակարգերի վերաբերյալ առաջարկությունները պետք է հաստատվեն Փոստային գործառնությունների խորհրդի՝ քվեարկելու իրավունք ունեցող անդամների մեծամասնության կողմից:

3 Ուժի մեջ մտնելու համար Համագումարների միջեւ ներկայացված՝ սույն Կոնվենցիայի եւ դրա Եզրափակիչ արձանագրության վերաբերյալ առաջարկությունները պետք է ստանան՝

3.1 ձայների երկու երրորդը, եթե Միության՝ քվեարկության իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն կեսը մասնակցել է քվեարկությանը, եթե խոսքը վերաբերում է փոփոխություններին,

3.2 ձայների մեծամասնությունը, եթե խոսքը վերաբերում է դրույթների մեկնաբանությանը:

4 Ցանկացած անդամ երկիր կարող է 3.1 կետի համաձայն ընդունված փոփոխության մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան իննսուն օր հետո վերապահում առաջարկել այդ նույն փոփոխության մասով՝ համաձայն 3.1 կետով սահմանված նույն հաստատման պայմանների եւ 40-րդ հոդվածի համապատասխան դրույթների:

**Հոդված 40****Վերապահումները Համագումարում**

1 Միության խնդիրների եւ նպատակների հետ անհամատեղելի վերապահումներ չեն թույլատրվում:

2 Որպես ընդհանուր կանոն, ցանկացած անդամ երկիր, որի տեսակետներն ընդունելի չեն մյուս անդամ երկրների կողմից, պետք է հնարավորինս փորձի հաշվի նստել մեծամասնության կարծիքի հետ: Վերապահումներ պետք է արվեն բացառապես բացարձակ անհրաժեշտության դեպքում, եւ դրանք պետք է պատշաճ կերպով հիմնավորված լինեն:

3 Սույն Կոնվենցիայի որեւէ հոդվածի մասով ցանկացած վերապահում ներկայացվում է Համագումար որպես Համագումարի առաջարկ՝ Միջազգային բյուրոյի աշխատանքային լեզուներից որեւէ մեկով եւ Համագումարների աշխատակարգերի համապատասխան դրույթների համաձայն:

4 Ուժի մեջ մտնելու համար վերապահումների վերաբերյալ ցանկացած առաջարկ պետք է հաստատվի վերապահմանը վերաբերող հոդվածում փոփոխության ընդունման համար պահանջվող մեծամասնության կողմից:

5 Որպես կանոն վերապահումները վերապահում կատարող անդամ երկրի եւ մյուս անդամ երկրների միջեւ կիրառվում են փոխադարձության սկզբունքով:

6 Սույն Կոնվենցիայի մասով կատարված վերապահումները ներառվում են դրա Եզրափակիչ արձանագրության մեջ՝ Համագումարի կողմից հաստատված առաջարկների հիման վրա:

**Հոդված 41****Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ին (բացառությամբ «Վարձատրություն» վերտառությամբ VII բաժնում ներառված բոլոր դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից) եւ գործում է անորոշ ժամկետով:

Ի հաստատումն որի՝ անդամ երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչները կնքեցին սույն Կոնվենցիան մեկ բնօրինակից, որն ի պահ է հանձնվում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին: Դրա մեկական օրինակը Միության Միջազգային բյուրոյի կողմից կփոխանցվի յուրաքանչյուր անդամ երկրի:

Կատարված է Աբիջանում 2021 թվականի օգոստոսի 26-ին:

## Համաշխարհային փոստային կոնվենցիայի եզրափակիչ արձանագրություն

### Հոդված

- I. Փոստային առաքանիների նկատմամբ սեփականության իրավունքը: Առաքանու հետկանչումը փոստից: Հասցեի փոփոխումը կամ ուղղումը
- II. Փոստային նամականիշերը
- III. Արտերկրում ուղարկվող գրավոր նամակագրական առաքանիները
- IV. Վճարումները
- V. Բացառություն՝ կուրերի համար նախատեսված առաքանիների փոստային վճարներից ազատման մասով
- VI. Հիմնական ծառայությունները
- VII. Ստացման մասին ծանուցումը
- VIII. Արգելքները (Գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանի)
- IX. Արգելքները (Ծանրոց հանդիսացող փոստային առաքանի)
- X Մաքսատուրքի վճարման ենթակա առարկաները
- XI. Մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճարները
- XII. Բողոքները
- XIII. Բացառություն կազմող ներքին ցամաքային դրույքաչափերը
- XIV. Օդային փոխադրումների վճարների առնչությամբ հիմնական դրույքաչափերը եւ դրույթները
- XV. Հատուկ սակագները
- XVI. Փոստային գործառնությունների խորհրդի՝ վճարները եւ դրույքաչափերը սահմանելու լիազորությունը

Համաշխարհային փոստային կոնվենցիայի եզրափակիչ արձանագրությունը

Այսօր կնքված Համաշխարհային փոստային կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրման պահին Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ Միություն) անդամ երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչները համաձայնեցին հետեւյալի մասին.

### Հոդված I

**Փոստային առաքանիների նկատմամբ սեփականության իրավունքը: Առաքանու հետկանչումը փոստից: Հասցեի փոփոխումը կամ ուղղումը**

1 Հինգերորդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում սահմանված դրույթները չեն



կիրառվում Անտիգուայի եւ Բարբուդայի, Բահրեյնի (Թագավորության), Բարբադոսի, Բելիզի, Բոտսվանայի, Բրունեյ Դարուսսալամի, Կանադայի, Հոնգ Կոնգի, Չինաստանի, Դոմինիկայի, Եգիպտոսի, Ֆիջիի, Գամբիայի, Գրենադայի, Գայանայի, Իռլանդիայի, Ճամայկայի, Քենիայի, Կիրիբատիի, Քուվեյթի, Լեսոթոյի, Մալավիի, Մալայզիայի, Մավրիկիոսի, Նաուրուի, Նոր Զելանդիայի, Նիգերիայի, Պապուա Նոր Գվինեայի, Սենթ Քիթս եւ Նեվիսի, Սենթ Լյուսիայի, Սենթ Վինսենթ եւ Գրենադինների, Սամոայի, Սեյշելյան կղզիների, Սիերա Լեոնեի, Սինգապուրի, Սողոմոնյան կղզիների, Սվազիլենդի, Տանզանիայի (Միացյալ Հանրապետության), Տրինիդադ եւ Տոբագոյի, Տուվալուի, Ուգանդայի, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Անդրծովյան տարածքների (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), Վանուատուի եւ Զամբիա նկատմամբ:

2 Հինգերորդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը չեն կիրառվում նաեւ Ավստրիայի, Դանիայի եւ Իրանի (Իսլամական Հանրապետություն) նկատմամբ, որոնց ներքին օրենսդրությամբ չի թույլատրվում ուղարկողի պահանջով առաքանու հետկանչումը փոստից կամ նամակագրության հասցեի փոփոխումն այն պահից սկսած, երբ հասցեատերն իմացել է իրեն հասցեագրված առաքանու ժամանման մասին:

3 Հինգերորդ հոդվածի 1-ին կետը չի կիրառվում Ավստրալիայի, Գանայի եւ Զիմբաբվեի նկատմամբ:

4 Հինգերորդ հոդվածի 2-րդ կետը չի կիրառվում Բահամյան կղզիների, Բելգիայի, Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության, Իրաքի եւ Մյանմարի նկատմամբ, որոնց օրենսդրությամբ չի թույլատրվում ուղարկողի պահանջով առաքանու հետկանչումը փոստից կամ նամակագրական թղթակցության հասցեն փոփոխելը:

5 Հինգերորդ հոդվածի 2-րդ կետը չի կիրառվում Ամերիկայի Միացյալ Նահանգների նկատմամբ:

6 Հինգերորդ հոդվածի 2-րդ կետը կիրառվում է Ավստրալիայի նկատմամբ միայն այնքանով, որքանով այդ հոդվածը համապատասխանում է նրա ներպետական օրենսդրությանը:

7 Չնայած 5.2 հոդվածին՝ Կոնգոյի Ժողովրդական Հանրապետությունը, Էլ Սալվադորը, Պանաման (Հանրապետություն), Ֆիլիպինները եւ Վենեսուելան (Բոլիվարական Հանրապետություն) իրավունք ունեն հրաժարվելու փոստային ծանրոցները հասցեատիրոջ կողմից մաքսագերծում պահանջվելուց հետո վերադարձնելուց, քանի որ դա հակասում է այդ երկրների մաքսային օրենսդրությանը:

## **Հոդված II**

### **Փոստային նամականիշները**

Չնայած 6.7 հոդվածին՝ Ավստրալիան, Մալայզիան, Նոր Զելանդիան եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը կարող են մշակել գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներ եւ ծանրոց հանդիսացող փոստային առաքանիներ, որոնց վրա առկա են նոր նյութերի կամ տեխնոլոգիաների օգտագործմամբ ստեղծված նամականիշեր, որոնք անհամատեղելի են իրենց փոստի մշակման համապատասխան մեքենաների հետ միայն տվյալ ծագման երկրի նշանակված օպերատորի հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ:

## **Հոդված III**

### **Արտերկրում ուղարկվող գրավոր նամակագրական առաքանիները**

1 Ավստրալիան, Ավստրիան, Հունաստանը, Նոր Զելանդիան, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներն իրավունք ունեն իրենց կատարած աշխատանքի արժեքին համարժեք վճար գանձելու ցանկացած նշանակված օպերատորից, որը 12.4 հոդվածի դրույթների համաձայն այնպիսի առաքանիներ է ուղարկում իրենց, որոնք իրենց ծառայությունների շրջանակներում ի սկզբանե չեն ուղարկվել որպես փոստային առաքանիներ:

2 Չնայած 12.4 հոդվածին՝ Կանադան իրավունք ունի ծագման երկրի նշանակված օպերատորից գանձելու այնքան գումար, որով կապահովվի այդ առաքանիների մշակման իր կրած ծախսերից ոչ պակաս կազմող գումարի փոխհատուցումը:

3 12.4 հոդվածով վերջնակետ երկրի նշանակված օպերատորին թույլատրվում է ուղարկող երկրի նշանակված օպերատորից պահանջել համապատասխան վարձատրություն՝ արտասահման ուղարկված մեծ քանակությամբ գրավոր նամակագրություն պարունակող առաքանիներն առաքելու դիմաց: Ավստրալիան եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունն իրավունք ունեն այդ վճարումները սահմանափակելու վերջնակետ երկրում համարժեք առաքանիների դիմաց գործող ներպետական համապատասխան սակագներով:

4 12.4 հոդվածով վերջնակետ երկրի նշանակված օպերատորին թույլատրվում է ուղարկող երկրի նշանակված օպերատորից պահանջել համապատասխան վարձատրություն՝ արտասահման ուղարկված մեծ քանակությամբ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներն ուղարկելու դիմաց: Հետեւյալ անդամ

երկրներն իրավունք ունեն սահմանափակելու այդպիսի վճարումները Կանոնակարգերով ծավալուն փոստային առաքումների համար թույլատրվող սահմանաչափերով՝ Բահամյան կղզիներ, Բարբադոս, Բրունեյ Դարուսսալամ, Չինաստան (Ժողովրդական Հանրապետություն), Գրենադա, Գայանա, Հնդկաստան, Մալայզիա, Նեպալ, Նիդեռլանդներ, Նիդեռլանդական Անտիլյան կղզիներ եւ Արուբա, Նոր Զելանդիա, Սենթ Լյուսիա, Սենթ Վինսենթ եւ Գրենադիններ, Սինգապուր, Շրի Լանկա, Սուրինամ, Թայլանդ, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Անդրծովյան տարածքներ (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն) եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

5 Չնայած 4-րդ հոդվածով սահմանված վերապահումներին՝ հետեւյալ անդամ երկրներն իրավունք ունեն ամբողջովին կիրառելու Կոնվենցիայի 12-րդ հոդվածի դրույթները Միության անդամ երկրներից ստացված փոստային առաքումների նկատմամբ՝ Արգենտինա, Ավստրալիա, Ավստրիա, Ադրբեջան, Բելգիա, Բենին, Բրազիլիա, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կանադա, Կոտ դ'Իվուար (Հանրապետություն), Կիպրոս, Դանիա, Եգիպտոս, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Գվինեա, Իրան (Իսլամական Հանրապետություն), Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Հորդանան, Լիբանան, Լյուքսեմբուրգ, Մալի, Մավրիտանիա, Մոնակո, Մարոկո, Նորվեգիա, Պակիստան, Պորտուգալիա, Ռուսաստանի Դաշնություն, Սաուդյան Արաբիա, Սենեգալ, Շվեյցարիա, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Տոգո եւ Թուրքիա:

6 12.4 հոդվածի կիրառմամբ Գերմանիան իրեն իրավունք է վերապահում ուղարկող երկրից պահանջելու այն գումարի փոխհատուցումը, որն ինքը կստանար ուղարկողի բնակության երկրից:

7 Չնայած III հոդվածի համաձայն արված վերապահումներին՝ Չինաստանը (Ժողովրդական Հանրապետություն) իրեն իրավունք է վերապահում սահմանափակելու արտասահման ուղարկված մեծ քանակությամբ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներն ուղարկելու համար կատարվող վճարումները Կոնվենցիայով եւ դրա Կանոնակարգերով ծավալուն փոստային առաքումների համար թույլատրված սահմանաչափերով:

8 Չնայած 12.3 հոդվածին՝ Ավստրիան, Բելգիան, Գերմանիան, Լիխտենշտեյնը, Շվեյցարիան եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունն իրենց իրավունք են վերապահում ուղարկողից կամ նրանից չստանալու դեպքում՝ ուղարկող երկրի նշանակված օպերատորից պահանջելու ներքին դրույքաչափերի վճարումը:

## **Հոդված IV**

### **Վճարումները**

1 Չնայած 15-րդ հոդվածին՝ Ավստրալիան, Բելառուսը, Կանադան, Ֆինլանդիան եւ Նոր Զելանդիան, Կանոնակարգերով նախատեսված վճարներից բացի, իրավունք ունեն գանձելու այլ փոստային վճարներ, երբ նման վճարները համապատասխանում են իրենց երկրների օրենսդրությանը:

2 Չնայած 15-րդ հոդվածին՝ Բրազիլիան իրավունք ունի լրացուցիչ վճար գանձելու առետրային առարկաներ պարունակող այն սովորական առաքանիների հասցեատերերից, որոնք, մաքսային եւ անվտանգության պահանջներով պայմանավորված, պետք է փոխարկվեն հետագծվող առաքանիների:

## **Հոդված V**

### **Բացառություն՝ կույրերի համար նախատեսված առաքանիների փոստային վճարներից ազատման մասով**

1 Չնայած 16-րդ հոդվածին՝ Ինդոնեզիան, Սենթ Վինսենթ եւ Գրենադինները եւ Թուրքիան, որոնք չեն ընդունում կույրերի համար նախատեսված առաքանիների համար իրենց ներքին ծառայության շրջանակներում փոստային վճարներից ազատումը, կարող են գանձել փոստային եւ հատուկ ծառայությունների դիմաց վճարներ, որոնք, սակայն, չեն կարող գերազանցել իրենց ներքին ծառայության շրջանակներում գանձվող վճարները:

2 Ֆրանսիան կիրառում է կույրերի համար նախատեսված առաքանիներին վերաբերող 16-րդ հոդվածի դրույթները՝ համաձայն իր ներպետական կարգավորումների:

3 Չնայած 16.3 հոդվածին եւ համաձայն իր ներպետական օրենսդրության՝ Բրազիլիան իրեն իրավունք է վերապահում որպես կույրերի առաքանիներ դիտարկելու միայն այն առաքանիները, որոնք ուղարկվում են կույրերի կամ կույրերի համար նախատեսված կազմակերպությունների կողմից կամ հասցեագրված են նրանց: Այն առաքանիները, որոնք չեն բավարարում այս պայմանները, ենթակա են փոստային վճարի վճարման:

4 Չնայած 16-րդ հոդվածին՝ Նոր Զելանդիան իր երկրում առաքման նպատակներով կընդունի կույրերի համար նախատեսված միայն այն առաքանիները, որոնք իրենց ներպետական ծառայության շրջանակներում ազատված են փոստային վճարներից:

5 Չնայած 16-րդ հոդվածին՝ Ֆինլանդիան, որը Համագումարի կողմից

ընդունված 16-րդ հոդվածում նշված սահմանումների իմաստով իր ներպետական ծառայության շրջանակներում կույրերի համար նախատեսված առաքանիների համար չի նախատեսում փոստային վճարներից ազատում, կարող է ներպետական վճարներ գանձել կույրերի համար նախատեսված՝ այլ երկրներ ուղարկվող առաքանիների համար:

6 Չնայած 16-րդ հոդվածին՝ Կանադան, Դանիան եւ Շվեդիան թույլատրում են կույրերի համար փոստային վճարներից ազատումը միայն իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված սահմաններում:

7 Չնայած 16-րդ հոդվածին՝ Իսլանդիան թույլատրում է կույրերի դեպքում փոստային վճարներից ազատումը միայն իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված սահմաններում:

8 Չնայած 16-րդ հոդվածին՝ Ավստրալիան իր երկրում առաքման նպատակներով կընդունի կույրերի համար նախատեսված միայն այն առաքանիները, որոնք իր ներպետական ծառայության շրջանակներում ազատված են փոստային վճարներից:

9 Չնայած 16-րդ հոդվածին՝ Ավստրալիան, Ավստրիան, Ադրբեջանը, Կանադան, Գերմանիան, Ճապոնիան, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը եւ Ամերիկայի Միացյալ Նահանգները կարող են վճարներ գանձել այն հատուկ ծառայությունների համար, որոնք իրենց ներքին ծառայությունների շրջանակներում կիրառվում են կույրերի համար նախատեսված առաքանիների նկատմամբ:

## **Հոդված VI**

### **Հիմնական ծառայությունները**

1 Չնայած 17-րդ հոդվածի դրույթներին՝ Ավստրալիան չի համաձայնում հիմնական ծառայությունների շրջանակում ընդգրկել ծանրոց հանդիսացող փոստային առաքանիները:

2 17.2.4 հոդվածի դրույթները չեն կիրառվում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նկատմամբ, որոնց ներպետական օրենսդրություններով պահանջվում է քաշի ավելի ցածր սահման: Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության առողջապահության եւ անվտանգության ոլորտի օրենսդրությունը սահմանափակում է նամակների պարկերի քաշը մինչեւ 20 կիլոգրամ:

3 Չնայած 17.2.4 հոդվածին՝ Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը եւ Ուզբեկստանն իրավունք ունեն սահմանափակելու ներքին եւ արտաքին M պարկերի առավելագույն քաշը մինչեւ 20 կիլոգրամ:

4 Չնայած 17-րդ հոդվածին՝ Իսլանդիան կույրերի համար նախատեսված առաքանիներ ընդունում է միայն իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված սահմաններում:

### **Հոդված VII**

#### **Ստացման մասին ծանուցումը**

1 Բելգիան, Կանադան եւ Շվեդիան իրավունք ունեն ծանրոցների առնչությամբ չկիրառելու 18.3.3 հոդվածը՝ հաշվի առնելով այն, որ նրանք իրենց ներքին ծառայության շրջանակներում չեն առաջարկում ծանրոցների ստացման մասին ծանուցման ծառայություն:

2 Չնայած 18.3.3 հոդվածին՝ Դանիան եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունն իրենց իրավունք են վերապահում չընդունելու ստացման մասին ստացվող ծանուցումներ՝ հաշվի առնելով, որ նրանք իրենց ներքին ծառայության շրջանակներում չեն առաջարկում ստացման մասին ծանուցման ծառայությունը:

3 Չնայած 18.3.3 հոդվածին՝ Բրազիլիան իրավունք ունի ընդունելու ստացման մասին ստացվող ծանուցումներ միայն, եթե դրանք կարող են վերադարձվել էլեկտրոնային եղանակով:

### **Հոդված VIII**

#### **Արգելքները (գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանի)**

1. Բացառության կարգով Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը եւ Լիբանանը չեն ընդունում պատվիրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր կամ արժեքավոր այլ առարկաներ: Նրանք ուղղակիորեն պարտավորված չեն պահպանելու Կանոնակարգերի՝ գողության կամ վնասի դեպքում իրենց պատասխանատվության վերաբերյալ դրույթները, կամ երբ խոսքը վերաբերում է ապակուց պատրաստված առարկաներ կամ հեշտ կոտրվող առարկաներ պարունակող առաքանիներին:

2 Բացառության կարգով, Բոլիվիան, Չինաստանը (Ժողովրդական Հանրապետություն)՝ բացառությամբ Հոնգ Կոնգի հատուկ վարչական շրջանի, Իրաքը, Նեպալը, Պակիստանը, Սաուդյան Արաբիան, Սուդանը եւ Վիետնամը չեն ընդունում պատվիրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման

ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր կամ արժեքավոր այլ առարկաներ:

3 Մյանմարն իրավունք է վերապահում չընդունելու ապահովագրված առաքանիները, որոնք պարունակում են 19.6 հոդվածում թվարկված արժեքավոր առարկաները, քանի որ դա հակասում է իր ներքին կանոնակարգերին:

4 Նեպալը չի ընդունում պատվիրված առաքանիները կամ ապահովագրված առաքանիները, որոնք պարունակում են արժույթով թղթադրամներ կամ մետաղադրամներ՝ բացառությամբ այդ մասով ձեռք բերված հատուկ համաձայնության առկայության:

5 Ուզբեկստանը չի ընդունում պատվիրված կամ ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, չեկեր, փոստային նամականիշեր կամ արտարժույթ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում:

6 Իրանը (Իսլամական Հանրապետություն) չի ընդունում առաքանիներ, որոնք պարունակում են իսլամական կրոնի սկզբունքներին հակասող առարկաներ, եւ իրավունք է վերապահում չընդունելու գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիներ (սովորական, պատվիրված կամ ապահովագրված), որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր կամ արժեքավոր այլ առարկաներ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում:

7 Ֆիլիպիններն իրավունք է վերապահում չընդունելու գրավոր նամակագրություն հանդիսացող որեւէ տեսակի առաքանի (սովորական, պատվիրված կամ ապահովագրված), որը պարունակում է մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր կամ արժեքավոր այլ առարկաներ:

8 Ավստրալիան չի ընդունում ձուլածո կամ թղթադրամներ պարունակող որեւէ տեսակի փոստային առաքանի: Բացի այդ, այն չի ընդունում Ավստրալիա առաքման համար պատվիրված առաքանիները կամ բաց տարանցման մեջ գտնվող այն առաքանիները, որոնք պարունակում են արժեքավոր առարկաներ, օրինակ՝ զարդեր, թանկարժեք մետաղներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, արժեթղթեր, մետաղադրամներ կամ փոխանցելի ֆինանսական փաստաթղթի որեւէ տեսակ: Այն հրաժարվում է ուղարկված այն առաքանիների նկատմամբ ամբողջ պատասխանատվությունից, որոնք չեն համապատասխանում սույն վերապահմանը:

9 Չինաստանը (Ժողովրդական Հանրապետություն)՝ բացառությամբ Հոնգ

Կոնգի հատուկ վարչական շրջանի, չի ընդունում ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա արժեթղթեր եւ ճամփորդական չեկեր՝ համաձայն իր ներքին կանոնակարգերի:

10 Լատվիան եւ Մոնդոլիան իրավունք են վերապահում, համաձայն իրենց ազգային օրենսդրության, չընդունելու սովորական, պատվիրված կամ ապահովագրված փոստային առաքանիները, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, ներկայացնող անձին վճարման ենթակա արժեթղթեր եւ ճամփորդական չեկեր:

11 Բրազիլիան իրավունք է վերապահում չընդունելու սովորական, պատվիրված կամ ապահովագրված փոստային առաքանիները, որոնք պարունակում են մետաղադրամներ, շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր:

12 Վիետնամն իրավունք է վերապահում չընդունելու առարկաներ կամ ապրանքներ պարունակող նամակներ:

13 Ինդոնեզիան չի ընդունում պատվիրված կամ ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, չեկեր, փոստային նամականիշեր, արտարժույթ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր՝ Ինդոնեզիայում առաքելու համար, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում:

14 Ղրղզստանն իրավունք է վերապահում չընդունելու գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները (սովորական, պատվիրված, ապահովագրված, փոքր փաթեթներ), որոնք պարունակում են մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր կամ արժեքավոր այլ առարկաներ, եւ այդ առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում:

15 Ադրբեջանը եւ Ղազախստանը չեն ընդունում պատվիրված կամ ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, վարկային տոմսեր կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած արժեթուղթ, չեկեր, թանկարժեք մետաղներ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր եւ արժեքավոր այլ առարկաներ կամ արտարժույթ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չեն կրում:

16 Մոլդովան եւ Ռուսաստանի Դաշնությունը չեն ընդունում պատվիրված կամ



ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ, ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր (չեկեր) կամ արտարժույթ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չեն կրում:

17 Չնայած 19.3 հոդվածին՝ Ֆրանսիան իրավունք է վերապահում չընդունելու ապրանքներ պարունակող առաքանիներն այն դեպքերում, երբ այդ առաքանիները չեն համապատասխանում իր ազգային կանոնակարգերին կամ միջազգային կանոնակարգերին կամ օդային փոխադրման համար սահմանված տեխնիկական եւ փաթեթավորման մասով ցուցումներին:

18 Կուբան իրավունք է վերապահում չընդունելու, չմշակելու, չփոխադրելու կամ չառաքելու գրավոր նամակագրություն հանդիսացող այն առաքանիները, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, չեկեր, թանկարժեք մետաղներ եւ քարեր, զարդեր կամ այլ արժեքավոր առարկաներ կամ ցանկացած փաստաթուղթ, ապրանք կամ առարկա այն դեպքերում, երբ այդ առաքանիները չեն համապատասխանում իր ազգային կանոնակարգերին կամ միջազգային կանոնակարգերին կամ օդային փոխադրման համար սահմանված տեխնիկական եւ փաթեթավորման մասով ցուցումներին, եւ նման առաքանիների գողության, կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում: Կուբան իրավունք է վերապահում չընդունելու մաքսատուրքի ենթակա՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիները, որոնք պարունակում են ապրանքներ, որոնք ներմուծվում են երկիր, եթե դրանց արժեքը չի համապատասխանում ազգային կանոնակարգերին:

## **Հոդված IX**

### **Արգելքները (ծանրոց հանդիսացող փոստային առաքանի)**

1 Մյանմարը եւ Ջամբիան իրավունք ունեն չընդունելու ապահովագրված ծանրոցները, որոնք պարունակում են 19.6.1.3.1 հոդվածում թվարկված արժեքավոր առարկաները, քանի որ դա հակասում է նրանց ներքին կանոնակարգերին:

2 Բացառության կարգով Լիբանանը եւ Սուդանը չեն ընդունում ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր կամ արժեքավոր այլ առարկաներ, կամ պարունակում են հեղուկներ կամ հեշտորեն հեղուկի վերածվող տարրեր, ապակուց պատրաստված առարկաներ կամ

նմանատիպ, հեշտ կոտրվող առարկաներ: Կանոնակարգերի համապատասխան դրույթները պարտադիր չեն նրանց համար:

3 Բրազիլիան իրավունք ունի չընդունելու ապահովագրված ծանրոցները, որոնք պարունակում են մետաղադրամներ եւ շրջանառության մեջ գտնվող արժույթով թղթադրամներ, ինչպես նաեւ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած արժեթուղթ, քանի որ դա հակասում է իր ներքին կանոնակարգերին:

4 Գանան իրավունք ունի չընդունելու ապահովագրված ծանրոցները, որոնք պարունակում են մետաղադրամներ եւ շրջանառության մեջ գտնվող արժույթով թղթադրամներ, քանի որ դա հակասում է իր ներքին կանոնակարգերին:

5 Բացի 19-րդ հոդվածում թվարկված առարկաներից՝ Սաուդյան Արաբիան իրավունք ունի չընդունելու ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր կամ արժեքավոր այլ առարկաներ: Այն չի ընդունում նաեւ ծանրոցներ, որոնք պարունակում են որեւէ տեսակի դեղամիջոց, եթե այն չի ուղեկցվում իրավասու պաշտոնական մարմնի կողմից տրված դեղատոմսով, հրդեհների մարման համար նախատեսված արտադրանքներ, քիմիական հեղուկներ կամ իսլամական կրոնի սկզբունքներին հակասող առարկաներ:

6 Բացի 19-րդ հոդվածում նշված առարկաներից՝ Օմանը չի ընդունում առաքանիներ, որոնք պարունակում են՝

6.1 ցանկացած տեսակի դեղամիջոց, եթե այն չի ուղեկցվում իրավասու պաշտոնական մարմնի կողմից տրված դեղատոմսով,

6.2 հրդեհաշիջման համար նախատեսված արտադրանքներ կամ քիմիական հեղուկներ,

6.3 առարկաներ, որոնք հակասում են իսլամական կրոնի սկզբունքներին:

7 Բացի 19-րդ հոդվածում թվարկված առարկաներից՝ Իրանը (Իսլամական Հանրապետություն) իրավունք ունի չընդունելու ծանրոցներ, որոնք պարունակում են իսլամական կրոնի սկզբունքներին հակասող առարկաներ, եւ իրավունք է վերապահում չընդունելու սովորական կամ ապահովագրված ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր կամ արժեքավոր այլ առարկաներ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում:

8 Ֆիլիպիններն իրավունք ունի չընդունելու ցանկացած ծանրոց, որը պարունակում է մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր կամ այլ

արժեքավոր առարկաներ, կամ պարունակում է հեղուկներ կամ հեշտորեն հեղուկի վերածվող տարրեր, ապակուց պատրաստված առարկաներ կամ նմանատիպ, հեշտ կոտրվող առարկաներ:

9 Ավստրալիան չի ընդունում ծուլածո կամ թղթադրամներ պարունակող որեւէ տեսակի փոստային առաքանի:

10 Չինաստանը (Ժողովրդական Հանրապետություն) չի ընդունում սովորական ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, ճամփորդական չեկեր, պլատին, ոսկի կամ արծաթ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր կամ արժեքավոր այլ առարկաներ: Ավելին, բացառությամբ Հոնգ Կոնգի հատուկ վարչական շրջանի՝ այն ապահովագրված ծանրոցները, որոնք պարունակում են մետաղադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր եւ ճամփորդական չեկեր, չեն ընդունվում:

11 Մոնղոլիան իրավունք է վերապահում, համաձայն իր ազգային օրենսդրության, չընդունելու այն ծանրոցները, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, ներկայացնող անձին վճարման ենթակա արժեթղթեր եւ ճամփորդական չեկեր:

12 Լատվիան չի ընդունում սովորական կամ ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, ներկայացնող անձին վճարման ենթակա արժեթղթեր (չեկեր) կամ արտարժույթ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում:

13 Մոլդովան, Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան եւ Ուզբեկստանը չեն ընդունում սովորական կամ ապահովագրված ծանրոցներ, որոնք պարունակում են շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ, ներկայացնող անձին վճարման ենթակա արժեթղթեր (չեկեր), եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չեն կրում:

14 Ադրբեջանը եւ Ղազախստանը չեն ընդունում սովորական կամ ապահովագրված ծանրոցներ, որոնք պարունակում են մետաղադրամներ, թղթադրամներ, վարկային տոմսեր կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած արժեթուղթ, չեկեր, թանկարժեք մետաղներ՝ մշակված կամ չմշակված, թանկարժեք քարեր, զարդեր եւ արժեքավոր այլ առարկաներ կամ արտարժույթ, եւ նման առաքանիների կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չեն կրում:

15 Կուբան իրավունք է վերապահում չընդունելու, չմշակելու, չփոխադրելու կամ չառաքելու այն փոստային ծանրոցները, որոնք պարունակում են

մետաղադրամներ, թղթադրամներ, արժույթով թղթադրամներ կամ ներկայացնող անձին վճարման ենթակա ցանկացած տեսակի արժեթղթեր, չեկեր, թանկարժեք մետաղներ եւ քարեր, զարդեր կամ այլ արժեքավոր առարկաներ կամ ցանկացած փաստաթուղթ, ապրանք կամ առարկա այն դեպքերում, երբ այդ առաքանիները չեն համապատասխանում իր ազգային կանոնակարգերին կամ միջազգային կանոնակարգերին կամ օդային փոխադրման համար սահմանված տեխնիկական եւ փաթեթավորման մասով ցուցումներին, եւ նման առաքանիների գողության, կորստի կամ դրանց հասցված վնասի դեպքերում որեւէ պատասխանատվություն չի կրում: Կուբան իրավունք է վերապահում չընդունելու մաքսատուրքի ենթակա փոստային ծանրոցները, որոնք պարունակում են ապրանքներ, որոնք ներմուծվում են երկիր, եթե դրանց արժեքը չի համապատասխանում իր ազգային կանոնակարգերին:

## **Հոդված X**

### **Մաքսատուրքի վճարման ենթակա առարկաները**

1 Հղում կատարելով 19-րդ հոդվածին՝ Բանգլադեշը եւ Էլ Սալվադորը չեն ընդունում ապահովագրված առաքանիներ, որոնք պարունակում են առարկաներ, որոնց նկատմամբ մաքսատուրքեր են սահմանված:

2 Հղում կատարելով 19-րդ հոդվածին՝ Աֆղանստանը, Ալբանիան, Ադրբեջանը, Բելառուսը, Կամբոջան, Չիլին, Կոլումբիան, Կուբան, Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը, Էլ Սալվադորը, Էստոնիան, Ղազախստանը, Լատվիան, Մոլդովան, Նեպալը, Պերուն, Ռուսաստանի Դաշնությունը, Սան Մարինոն, Թուրքմենստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը եւ Վենեսուելան (Բոլիվարական Հանրապետություն) չեն ընդունում սովորական եւ պատվիրված նամակներ, որոնք պարունակում են առարկաներ, որոնց նկատմամբ մաքսատուրք է սահմանված:

3 Հղում կատարելով 19-րդ հոդվածին՝ Բենինը, Բուրկինա Ֆասոն, Կոտ դ'Իվուարը (Հանրապետություն), Զիբուֆին, Մալին եւ Մավրիտանիան չեն ընդունում սովորական նամակներ, որոնք պարունակում են առարկաներ, որոնց նկատմամբ մաքսատուրք է սահմանված:

4 Չնայած 1-3 կետերով սահմանված դրույթներին՝ բոլոր դեպքերում թույլատրվում է ուղարկել շիճուկներ, պատվաստանյութեր եւ շտապ անհրաժեշտ դեղամիջոցներ, որոնք դժվար է ձեռք բերել:

## **Հոդված XI**

### **Մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճարները**

1 Գաբոնն իրավունք է վերապահում հաճախորդներից գանձելու մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճարներ:

2 Չնայած 20.2 հոդվածին՝ Արգենտինան, Ավստրալիան, Ավստրիան, Բրազիլիան, Կանադան, Կիպրոսը, Ֆինլանդիան, Ռումինիան, Ռուսաստանի Դաշնությունը եւ Իսպանիան իրավունք են վերապահում մաքսային հսկողության ներկայացված յուրաքանչյուր առաքանու համար հաճախորդներից գանձելու մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճարներ:

3 Չնայած 20.2 հոդվածին՝ Ադրբեջանը, Հունաստանը, Պակիստանը եւ Թուրքիան իրավունք են վերապահում հաճախորդներից գանձելու մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճարներ՝ մաքսային մարմիններին ներկայացված բոլոր առաքանիների համար:

4 Կոնգոն (Հանրապետություն) եւ Զամբիան իրավունք են վերապահում ծանրոցների մասով հաճախորդներից գանձելու մաքսատուն ներկայացնելու համար նախատեսված վճարներ:

## **Հոդված XII**

### **Բողոքները**

1 Չնայած 21.2 հոդվածին՝ Կաբո Վերդեն, Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը, Եգիպտոսը, Գաբոնը, Հունաստանը, Իրանը (Իսլամական Հանրապետություն), Ղրղզստանը, Մոնղոլիան, Մյանմարը, Ֆիլիպինները, Սաուդյան Արաբիան, Սուդանը, Սիրիայի Արաբական Հանրապետությունը, Թուրքմենստանը, Ուկրաինան, Անդրծովյան տարածքները (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), Ուզբեկստանը եւ Զամբիան իրավունք են վերապահում հաճախորդներից գանձելու վճարներ՝ գրավոր նամակագրություն հանդիսացող առաքանիների առնչությամբ ներկայացված բողոքների վերաբերյալ:

2 Չնայած 21.2 հոդվածին՝ Արգենտինան, Ավստրիան, Ադրբեջանը, Բելառուսը, Կանադան, Ֆինլանդիան, Հունգարիան, Լիտվան, Մոլդովան, Նորվեգիան, Ռումինիան եւ Սլովակիան իրավունք են վերապահում գանձելու հատուկ վճար այն դեպքում, երբ բողոքին ի պատասխան կատարված քննությունն ավարտելիս պարզ է դառնում, որ այն անհիմն է եղել:

3 Աֆղանստանը, Կաբո Վերդեն, Կոնգոն (Հանրապետություն), Եգիպտոսը, Գաբոնը, Իրանը (Իսլամական Հանրապետություն), Ղրղզստանը, Մոնղոլիան,

Մյանմարը, Սաուդյան Արաբիան, Սուդանը, Սուրինամը, Սիրիայի Արաբական Հանրապետությունը, Թուրքմենստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը եւ Ջամբիան իրավունք են վերապահում հաճախորդներից գանձելու ծանրոցների առնչությամբ ներկայացված բողոքների համար վճար:

4 Չնայած 21.2 հոդվածին՝ Բրազիլիան, Պանաման (Հանրապետություն) եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներն իրավունք են վերապահում գրավոր նամակագրություն հանդիսացող այն առաքանիների եւ ծանրոցների առնչությամբ ներկայացված բողոքների դիմաց հաճախորդներից վճար գանձելու, որոնք ուղարկվում են այն երկրներ, որոնք գանձում են այդ տեսակի վճարներ՝ սույն հոդվածի 1-3-րդ կետերին համապատասխան:

### **Հոդված XIII**

#### **Բացառություն կազմող ներքին ցամաքային դրույքաչափերը**

Չնայած 33-րդ հոդվածին՝ Աֆղանստանն իրավունք է վերապահում յուրաքանչյուր ծանրոցի համար գանձելու բացառություն կազմող ներքին ցամաքային հավելյալ 7.50 ՓՀԻ դրույքաչափ:

### **Հոդված XIV**

#### **Օդային փոխադրումների վճարների առնչությամբ հիմնական դրույքաչափերը եւ դրույթները**

Չնայած 34-րդ հոդվածի դրույթներին՝ Ավստրալիան իրավունք է վերապահում կիրառելու օդային փոխադրման դրույքաչափեր՝ ապրանքների վերադարձի ծառայության միջոցով ուղարկված արտաքին ծանրոցների համար, կա՛մ Կանոնակարգերով սահմանված կարգով, կա՛մ ցանկացած այլ միջոցով, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերով:

### **Հոդված XV**

#### **Հատուկ սակագները**

1 Բելգիան, Նորվեգիան եւ Ամերիկայի Միացյալ Նահանգները օդային ծանրոցների համար կարող են գանձել ավելի բարձր ցամաքային դրույքաչափեր, քան վերգետնյա ճանապարհով ուղարկվող ծանրոցների համար:

2 Լիբանանն իրավունք ունի մինչեւ 1 կիլոգրամ քաշ ունեցող ծանրոցների համար գանձելու վճար, որը կիրառվում է 1-3 կիլոգրամ քաշ ունեցող ծանրոցների նկատմամբ:

3 Պանաման (Հանրապետություն) ունի մեկ կիլոգրամի համար 0.20 ՓՀԻ

գանձելու իրավունք՝ տարանցման մեջ գտնվող վերգետնյա փոստային առաքմամբ առաքվող (S.A.L.) ծանրոցների համար:

#### **Հոդված XVI**

**Փոստային գործառնությունների խորհրդի՝ վճարները եւ դրույքաչափերը սահմանելու լիազորությունը**

Չնայած 36.1.6 հոդվածին՝ Ավստրալիան իրավունք է վերապահում կիրառելու արտաքին ցամաքային դրույքաչափեր՝ ծանրոցների մասով ապրանքների վերադարձի ծառայության տրամադրման համար, կա՛մ Կոնոնակարգերով սահմանված կարգով, կա՛մ ցանկացած այլ միջոցով, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերով:

Ի հաստատումն որի՝ լիազորված ներկայացուցիչները կազմել են սույն Արձանագրությունը, որն ունի նույն ուժն ու վավերականությունը, ինչը կունենար այն դեպքում, երբ դրա դրույթները ներառված լինեին Կոնվենցիայի բուն տեքստում, եւ կնքել են այն մեկ բնօրինակից, որն ի պահ է հանձնվում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին: Դրա օրինակը կփոխանցվի յուրաքանչյուր անդամ երկրի՝ Միության Միջազգային բյուրոյի կողմից:

Կատարված է Աբիջանում 2021 թվականի օգոստոսի 26-ին:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021թ. օգոստոսի 26-ին ստորագրված Համաշխարհային փոստային կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**